



10-11(403-404)

21.04.2015

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարկ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՀԻՇՈՒՄ ԵՆԷ ԵՎ ԴԱՆԱՆԶՈՒՄ

Յուրաքանչյուր հայի լուռ կարգախոսը դարձած այս արտահայտությունը միայն հարյուրամյա մեծ ցավի արտահայտություն չէ, այն նաև բողոքի ճիչ է ընդդեմ անցյալ դարասկզբին Օսմանյան թուրքիայում իրականացված ցեղասպանության: Հայոց մեծ եղեռնը ապրվում է ամեն մի նոր սերնդի մեջ, իսկ անցնող ժամանակը մեզ ոչ թե հեռացնում է պատմական ողբերգությունից, այլ հակառակը՝ ավելի է մոտեցնում ցավի արմատին: 1915-1923 թվականներին երիտթուրքերի, այնուհետև նաև քեմալականների վարած ստոր քաղաքականությունն ուղղված էր մի հիմնավոր ցեղային բնաջնջման: Հրի ճարակ դարձան հազարավոր հայաբնակ գյուղեր ու քաղաքներ, սրի մատնվեց կամ տարագրվեց մեկուկես միլիոն հայ, որոնց մեղքն ընդամենը... նրանց ազգային պատկանելությունն էր:

Այս ահասարուռ փաստը, ցավը, դեռևս քիչ պետություններ են ընդունել: Անցած հարյուրամյակում հայերի ցեղասպանությունը համընդհանուր չճանաչելու պատճառը թերևս հայոց պետականության բացակայությունն էր: Վերջին ավելի քան երկու տասնամյակում, Հայաստանի Հանրապետության անկախ պետականության պայմաններում, ցեղասպանության ճանաչման նոր գործընթաց է սկսվել աշխարհում, որը քանի գնում՝ ավելի մեծ թափ է առնում: Մեր երախտագիտությունն ենք հայտնում այն բոլոր երկրներին, որոնք արդեն իսկ դատապարտել են մարդկության դեմ ուղղված այդ ոճրագործությունը՝ շեշտադրելով մոլորակի վրա նոր ցեղասպանությունների հրահրման անթույլատրելիությունը:

Նաև հավատում ենք, որ ոչ հեռու ապագայում պատմական արդարությունը կվերականգնվի, և թուրքիան առերեսման կկանգնի իր իսկ պատմության առաջ: Դրա հուսալի հիմքերը կան. օրերս Եվրախորհրդարանը իր լիազուցված միաձայն հավանություն տվեց Հայոց ցեղասպանության մասին բանաձևին, որով առաջարկվում է հանձնարարվում է Եվրամիության անդամ երկրների խորհրդարաններին ու կառավարություններին՝ համապատասխան բանաձևեր ընդունել ու որոշումներ կայացնել ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ:

Նկատենք, Եվրախորհրդարանը երրորդ անգամ է ընդունում փաստաբար, որով ճանաչում է 1915 թվականին Օսմանյան կայսրությունում մեկուկես միլիոն հայերի բնաջնջման փաստը: Հատկապես կարևոր է, որ այս անգամ բանաձևի նախագծի քննարկման ժամանակ էս պատգամավորները կոչ են արել թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Համանման որոշում Եվրախորհրդարանն ընդունել էր նաև 2005թ. սեպտեմբերի 28-ին: Իսկ 1987 թվականի հունիսի՝ ԵՄ-ի ընդունած բանաձևում ընդգծվում էր, որ Եվրոպական խորհրդարանը 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները գնահատում է որպես ցեղասպանություն, ինչպես որ սահմանված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունած՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դատապարտման կոնվենցիայում:

Աշխարհն, այո, պարտավոր է ճանաչել ու դատապարտել Հայոց եղեռնը: Անժխտելի է, որ եթե հայ ժողովրդի դեմ ուղղված ոճրագործությունը ժամանակին դատապարտվեր, ապա հազիվ թե լիներ հրեական Յոլոթոստը, որը մուսուլման մարդկության դեմ ուղղված մեծագույն ոճիրներից է:

Ցավը հիշելը նաև հատուցում է պահանջում: Մարդու մարմնի վրա վերջը կարող է սպիանալ, բայց ժողովրդին պատճառված վերջը սպիանալ չի կարող, քանի դեռ այն շարունակում է մնալ անտեսված ու արմատոր:

Ազգի մեծ ցավը հիշելով՝ մենք միաձայն դա ենք պահանջում:

«ԼՍԱՐԱՐ»

## ՃԱՆԱԳՈՒՄ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՎ ՆԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

«Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն» ապրիլի 11-ին Արցախի պետական համալսարանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի թեման էր: Միջոցառումը նվիրված էր հայ ժողովրդի պատմության մեջ ամենաողբերգական իրադարձության 100-րդ տարելիցին: Մասնակից երկրների աշխարհագրությունը մեծ չէր՝ Ռուսաստան, Հայաստան և Արցախ: Ներկա էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, կրթության և գիտության նախարար Ալվա Արյանը, պաշտոնատար այլ անձինք:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և արգասաբեր աշխատանք մաղթեց մայր բուհի ղեկավոր Մանուշ Մինասյանը: Մեկ դար անց էլ Ցեղասպանությունը հայության համար շարունակում է մնալ չսպիացող վերք, ասաց նա՝ միաժամանակ ընդգծելով, որ մեր ժողովրդին իր մեջ ուժ է գտել վերածնվելու ու վերականգնելու կորսված պետականությունը:

Գիտաժողովի մասնակիցներին ուղերձ էր հղել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: 20-րդ դարի առաջին ցեղասպանության ըստ արժանվույն չդատապարտելը ծնել է նոր ոճիրներ: Անպատժելիությունն է խրախուսել Աղբերջային՝ 20-րդ դարի վերջին Սումգայիթում, Բաքվում կազմակերպվելու հայերի ջարդեր, պատերազմ սանձազերծելու Արցախի դեմ՝ ոչնչացնելու համար երկրի իսկական տերերին՝ հայերին: «Սակայն այս անգամ մեր ժողովրդին բնաջնջելու հակառակորդի ծրագրերը դատապարտված էին ձախողման,- ասված էր ուղերձում,- քանզի դարավոր ցավն ու կորուստն ուժեղացրել էին հայի ազատատենչ ոգին, դարձրել նրան ավելի ամուր ու անսասան: Արցախյան ազատամարտի տարիներին համայն հայությունը ոտքի ելավ մեկ մարդու պես՝ պաշտպանելու իր պատմական հողը, հնագույն լեզուն, հավատքն ու մշակույթը, սեփական ձեռքերով կերտելու իր ճակատագիրը: Համազգային միասնությունն ու համախմբվածությունը և հայոց անկախ պետականությունը դարձան մեր հաղթանակների գրավականն ու խորհրդանիշը»:

Օրինության խոսքում Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը գոտեպնդիչ համարեց հանցամասնքը, որ ապրիլի 23-ին Մեծ եղեռնի մեկուկես միլիոն անմեղ զոհերը վերջապես պաշտոնապես կարգավեց: Նա համոզված է, որ մեզ բաժին ընկած ծանրագույն փորձությունից անգամ դրակնը պիտի քաղենք՝ կոփվելով և գորեղանալով, ինչը մեր ազգին կդարձնի անպարտելի: Իսկ պահանջատիրությունը, դրան հետամուտ լինելը Մրբազանը քննում է ավելի շատ բարոյական տեսանկյունից, քանզի համարում է, որ դա պիտի արվի նախառաջ հանուն մարդկության՝ նրան գերծ

պահելու համար հանցագործություններից:

Հայոց ցեղասպանության ճանաչման նոր փուլի առանձնահատկությունների մասին էր երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանի զեկուցումը: «Այսօր էլ Հայոց ցեղասպանության մեղադրանքը մնում է որպես առկա իրողություն, որը պետք է ճանաչվի պատասխանատու պետությունների կողմից», - ասաց նա: Մինչև 1965 թվականը խորհրդային Միությունում Մեծ եղեռնը արգելված թեմա էր առաջին հերթին ուսումնասիրողների համար: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման փուլի սկիզբը եղավ հենց 1965 թվականը, երբ Ռուրուզվայի Սենատը և Ներկայացուցիչների պալատը Գլխավոր ասամբլեայի համատեղ միտում որոշում ընդունեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին: Դրանից հետո ցեղասպանությունը ճանաչող նոր որոշումներ ընդունվեցին:

Ըստ բանախոսի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման նոր փուլի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ Թուրքիայում փոխվել է հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Մի շարք պատմաբաններ ու գիտնականներ ոչ միայն ճանաչում են Հայոց ցեղասպանությունը, այլ նաև կոչ են անում իրենց պետությանը՝ այն պաշտոնապես ճանաչելու: Թուրքիայի հասարակությունն այդ ճանաչումը համարում է երկրի ժողովրդավարացման բաղկացուցիչ: Վաղ թե ուշ Թուրքիան պետք է առերեսվի սեփական պատմության հետ: Եվրամիությանն անդամակցելու այդ երկրի ցանկությունն այդպես էլ կմնա ցանկություն, եթե նա չճանաչի Հայոց ցեղասպանության փաստը: Եվրախորհրդարանը, սկսած 2000 թվականից, մի քանի անգամ բանաձևեր է ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման և Թուրքիայի վարքագծի դատապարտման վերաբերյալ:

Ձեկուցողն ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևերից միայն Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Ռուսաստանի և Եվրոպայի ժողովրդական կուսակցության բանաձևերում է նշված, որ հայերը ոչնչացվել են իրենց բնօրրանում, շեշտադրում, որը ենթադրում է հատուցում: Նա կարծում է, որ պետք է «որևէ բանաձև որևէ երկրի խորհրդարանում տանելուց առաջ հստակեցնենք, թե ճանաչելուց հետո հատուցման փուլն ինչպես է կազմակերպվում, որը կլինի հենց բանաձևի մեխը»: Իսկ որպեսզի միջազգային աստիճաններում կարողանանք պաշտպանել մեր դատը, պետք է հասնենք նրան, որ միջազգային իրավունքում ամրագրվի ցեղասպանության ճանաչարհով ժողովր-



դին հայրենագրվելու համար նախատեսված պատասխանատվությունը: Այս թեմանը գիտնականն առաջ էր քաշել դեռևս 2009, 2010 թվերին: Ե. Մինասյանն ուրախալի համարեց փաստը, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագրում իրավական պահանջների թրթածորար մշակվելու վերաբերյալ դրույթ է ներառված:

Երևանի պետական լսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ալեքսանդր Մանասյանը կանգ առավ Հայոց եղեռնի միջազգային քաղաքական ասպեկտների վրա: Քաղաքական մոտեցման անմիջական օբյեկտը, ըստ նրա, նախառաջ տեքստն է, բանալի բառը, որոնք թույլ են տալիս ճիշտ մեկնաբանելու փաստը, իրադարձությունը: Ձեկուցողի տեսակետով՝ պետք է զգուշությամբ, քննադատաբար օգտագործել «Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը 1915-1923 թվականներին» տարածված բանաձևը: Նրա պնդմամբ՝ անհրաժեշտ է վերանայել այս բանաձևը, քանի որ Հայոց ցեղասպանությունն սկսվել է ավելի վաղ՝ 19-րդ դարի վերջին համիդյան ջարդերով և շարունակվել նաև քեմալական կառավարության ժամանակ, իսկ 1915 թվականը խորհրդանշական իմաստ ունի և Մեծ եղեռնի տարին է, Մեծ ցեղասպանության, ուստի նշում ենք ոչ թե Հայոց ցեղասպանության, այլ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը: Այլ Մանասյանը բանաձևը ճիշտ չհամարեց նաև աշխարհագրական ընդգրկման տեսանկյունից՝ հիշեցնելով, որ թուրքերը հայերի զանգվածային կոտորածներ են կազմակերպել նաև Արևելյան Հայաստանում, Արևելյան Անդրկովկասում:

Հետևաբար, տվյալ բանաձևը, գիտնականի եզրահանգմամբ, համարժեք ձևով չի արտացոլում տեղի ունեցած ոճրագործության քաղաքական ու փաստական բովանդակությունը: Իրողության աղավաղված բանաձևնանը, նրա համոզմամբ, նպաստել են Արևմուտքը և խորհուրդների երկիրը՝ իրենց հանցավոր լուսթյամբ:

Քաղաքական մեծ նշանակություն ունեցող մի կարևոր հանգամանք է: 20-րդ դարում որպես ցեղասպան պետություն կայացած

Թուրքիան հիմնել է նոր ցեղասպան պետություններ՝ Աղբերջանի Դեմոկրատական Հանրապետությունը, իրավահաջորդ՝ մերօրյա Աղբերջանի Հանրապետությունը և Կիպրոսը: Այս ամենը պետք է ներառվի ձևակերպումներում, երբ մենք խնդիր ենք կայացնում ենք աշխարհին. բանախոսի հետևությունն է:

Քաղաքական մի այլ տեսանկյուն: Չպատժված հանցագործությունը (գիտնականն «անպատժված» բնութագրիչը չի օգտագործում) ծանր քաղաքական հետևանքների է հանգեցրել:

Նախ՝ թուրքն իրեն անպատժելի է կարծում: Երկրորդ՝ երկրները, որոնք Հայոց ցեղասպանության ճանաչումը դարձրել են քաղաքական առևտրի առարկա, իրենց հասարակություններին ակամա ներքաշել են այդ գործարքի մեջ, ինչը չի կարող բացասական հետևանքներ չունենալ իրենց իսկ համար: Իսկ հայերս մեր դեմ գործած ոճիրը պետք է ներկայացնենք առաջին հերթին որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն: Առաջին հերթին և հետևողականորեն:

Այլ Մանասյանը ցավով նշեց, որ աղբերջանախալության ցեղասպանությունը դուրս է թողնված խնդրի շրջանակից, անտեսվում է դրա կարևոր դարաբաղյան հակամարտության հետ:

Հրեաներն իրենց ցեղասպանության առանձնահատկությունն արտահայտել են «հոլոքոստ» (ողջակիզում) եզրույթով: Գիտնականն առաջարկեց հայերի ցեղասպանությունն աշխարհում ճանաչելի դարձնել «եղեռն» եզրույթով, որն արտացոլի ժողովրդին իր հայրենիքում բնաջնջելու իմաստը:

Կիսազուար միտում վերջին՝ ԱրԴՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիչյանի «Հայաստանի քաղաքացիությունը որպես ցեղասպանագործի հանցածին վարքագծի ձևավորման գործոն» զեկուցումը լսելուց հետո գիտաժողովի մասնակիցներն աշխատանքը շարունակեցին պատմության, քաղաքագիտության և իրավագիտության, գրականագիտության ու լեզվաբանության, օտար լեզուների մասնախմբերում:

Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՋՔՈՒՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԵՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎ Է ԹՈՒՐԷԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում ապրիլի 8-ին Արցախի պետական համալսարանում տեղի ունեցավ հանրապետական ուսանողական միջբուհական գիտաժողով, որը նախաձեռնել էր պատմության ամբիոնը: Ներկա էին բուհի ղեկավարությունը, պատմության և քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողներն ու դասախոսները, լրագրողներ: Հրավիրված էին և ելույթներով հանդես եկան Մեսրոպ Մաշտոց Համալսարանի ուսանողները:

Գիտաժողովի աշխատանքները ողջունեց և հաջողություններ մարտնչեց Արցախի մայր բուհի ղեկավար Մանուշ Մինասյանը: Նրա խոսքով՝ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ չափազանց կարևորվում է 20-րդ դարի առաջին Ցեղասպանության ճանաչման, դատապարտման և իրավական հետևանքների գնահատման գործընթացը: Այս առումով կարևոր է համայն հայության ուժերի մեկտեղումը, որին պետք է միանա աշխարհի քաղաքակիրթ մարդկությունը:

Առաջին զեկուցողը ԱրԴՀ պատմության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Տաթև Պետրոսյանն էր, ով հանդես եկավ «Հայոց մեծ եղեռնի ծրագիրը և իրականացման ձևերը» թեմայով: 19-րդ դարի վերջերից, համոզվելով, որ հայ ժողովրդին ծուլելու, Հայաստանը հայաթափելու քաղաքականությունն արդյունք չի տալիս, թուրքերը կրկին անցնում են հայերի ֆիզիկական բնաջնջման քաղաքականության իրականացմանը: Եղեռնի և զանգվածային կոտորածների միջոցով նոր հայրենիք ձեռք բերելու քաղաքականության հիմքը դրել է Աբդուլ Համիդ 2-րդը, ով 1894-1896թթ. ոչնչացրել է շուրջ 300 հազար հայերի: Թուրքիան սպասում էր միջազգային հարմար պահի՝ հայերի ցեղասպանու-

թյան ծրագիրն ամբողջությամբ իրագործելու համար: Նման գաղափարախոսության նպատակը Մեծ Թուրանի ստեղծումն էր, որը պետք է իրականացվեր երեք փուլով: Ձեկուցողը դրանցից յուրաքանչյուրին անդրադարձավ առանձին-առանձին:

Պատմությունը խաչաձևեց թուրքերի և հայերի ազգային շահերը: Հարցը դրվել էր անողորմ կերպով՝ հայոց պատմական հայրենիքում պետք է ապրեր մեկը՝ կամ թուրքը, կամ հայը: Հայ ժողովուրդը պետք է կարողանար պաշտպանել իր հայրենիքը թուրքական զավթիչներից, կամ էլ գաղթել օտար երկրներ, հակառակ դեպքում դատապարտված էր ոչնչացման: Եվ հայն ընտրեց պայքարի ուղին: Ազատագրական պայքարի ընթացքում մշակվում է չարյաց փոքրագույնի կոնցեպցիան, որի համաձայն՝ եթե անկախության համար բարենպաստ պայմանները բացակայում են, ապա կենսական անհրաժեշտություն է դառնում Ռուսաստանի և ոչ թե Թուրքիայի տիրապետության տակ գտնվելը, քանզի եթե առաջինը մշակվում էր լույս պետության կորուստ, ապա երկրորդը հանգեցնում էր հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման:

Ընդհանուր առմամբ՝ հնչեց 13 զեկուցում, որոնցում գիտականորեն վերհանվեցին 20-րդ դարասկզբի ոճաբանության մանրամասները, դրանց պատմական հետևանքներն ու ժամանակակից խնդիրները: Գիտական աշխատանքների հեղինակները նաև պատասխանեցին ներկայից հարցերին:

Ըստ բանախոսների՝ Հայոց ցեղասպանությունը մեծ թափ ստացավ համաշխարհային պատերազմի բռնկմանը զուգընթաց, այն պահին, երբ Թուրքիան դեռ ոչ մի երկրի պատերազմ չէր հայտարարել, և ոչ էլ իրեն էին ներ-

բաշել այդ սպանողի հորձանուղը: Սակայն երիտթուրքերը, վաղօրոք նախապատրաստված լինելով ցեղասպանության իրականացմանը, ակնդետ սպասում էին նպատակը պայմանների: Իրար հոշոտող երկու բանակների բաժանված աշխարհի մեծերը, սեփական հոգսերից գատ, այլևս ուրիշներով զբաղվելու ժամանակ չէին գտնում: Թուրքերի համար այդպիսի օրեր եղան պատերազմի առաջին տարիները, որից օգտվելով՝ սկսեցին մեծ ոճրի իրականացումը:

Ամեն ինչ սկսվեց 4. Պոլսից, որտեղ խարսխված էր բազմահազարանոց արևմտահայությունը: 1915թ. ապրիլի 23-ն էր, օրը՝ շաբաթ: Նախորդ օրվա Ձատկի տոների արարողությունից հոգնած հայ համայնքը նիհիլում էր խաղաղ քնով, գուցե և արդեն նոր երազանքներով: Մայրաքաղաքում այդ ժամանակ ապրում էր հայ մտավորականության փառանքը՝ 196 գրող, 168 նկարիչ, 578 երաժիշտ, 336 բուժաշխատող, 176 ուսուցիչ, 160 իրավաբան, 62 ճարտարապետ, 64 դերասան: Ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը թուրքական ցեղապաշտների զինված հրոսակները ներխուժեցին հայ մտավորականների բնակարանները: Մարդկային երևակայությունն անգործ էր պատկերացնել կատարվածը: Մինչ առավոտյան աղջանուղը մեծ քաղաքը վերածվել էր դժոխքի...

Կոտորածի հետևանքները զարհուրելի էին. Արևմտյան Հայաստանը գրկվեց իր 2000-ամյա մշտական բնակչությունից: Մեկ տարվա ընթացքում բռնի մահմեղականացվեց 200 հազար հայ, որոնք այժմ ապրում են ճորտի գետի հովտում: Գողթական դարձավ և աշխարհով մեկ սյուրվեց ավելի քան 1 միլիոն հայ: Ահեղ էին և նյութական կորուստները:

1915թ. երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությանը զոհ գնաց 1,5 միլիոն հայ:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության իրականացումից արդեն անցել է 100 տարի: Այնինչ, այդ երկիրը մինչ օրս չի ճանաչել այն, քանի որ դա ենթադրում է Թուրքիայի նկատմամբ բարոյական, հողային և նյութական պահանջների ներկայացում:

Ձեկուցող Արփիհն Աղաջանյանի համոզմամբ՝ Թուրքիայի Հանրապետության՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդի, կազմում է առնվազն 41,5 մլրդ ԱՄՆ դոլար: Իրավաբանների միջազգային հանձնաժողովի (ԺՆԱ) ավագ իրավախորհրդատու Ֆեդերիկո Անդրու-Գուզանը գրում է. «Հայ ժողովրդի դեմ իրականացված հանցագործությունը դեռ Թուրքիայի պատասխանին է սպասում. ցեղասպանությունը պիտի ճանաչվի, և վնասները պիտի փոխհատուցվեն: Որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ՝ թուրքական պետությունն ունի միջազգային իրավական պարտավորություններ: Համաձայն միջազգային իրավունքի՝ հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի, ինչպես նաև, ըստ շարունակականության ու պատասխանատվության սկզբունքի, նրա իրավահաջորդի վրա»:

Ամփոփելով գիտաժողովի աշխատանքները՝ ԱրԴՀ ղեկավարը շնորհակալություն հայտնեց գիտական աշխատանքները ներկայացնողներին ու դրանց ղեկավարներին:

Լուսինա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՎԻՐԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՍ ԵՐԿԻՐ ՖՐԱՆՍԻԱՅԻՆ

Արդեն չորս տարի է, ինչ Արցախի հանրակրթական օջախներում դասավանդվում է ֆրանսերենը, և չնայած այդ կարճ ժամանակահատվածին, այնուամենայնիվ, ուսուցիչները կարողացան հասնել հաջողությունների, որի վառ ապացույցն է վերջերս Ստեփանակերտի 11-րդ դպրոցում կայացած միջոցառումը: Այն նվիրված էր Ֆրանսիային և Ֆրանսախոսության օրերին, որն էլ աշխարհում ընդունված է տոնել մարտի 20-ից: Ինչպես նշեց դպրոցի ֆրանսերենի

խորհրդանիշ դարձած Կոմիտաս վարդապետին ներկայացնելուց հետո ութերորդյակներն անցում կատարեցին Հայոց ցեղասպանության թեմային:

Ներկայացնելով ցեղասպանության սահմելեցուցիչ պատմությունը՝ վերջիններս մանրամասնորեն պատմեցին Ֆրանսիայի Հանրապետության, ֆրանսիացի քաղաքական գործիչների քայլերը՝ Հայոց ցեղասպանությունը ոչ միայն ընդունելու, այլև քրեորեն դատապարտելու՝ Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը՝ մասնավորապես կանգ առնելով Վալերիա Բուալեի և Ֆրանսուա Ռոժբլուանի հայանպաստ գործունեության վրա: Այնուհետև աշխարհառջակ երգիչ, մեր հայրենակից Շառլ Ազնավուրի «Ավե Մարիա» երգի հնչյունների ներքո աշակերտները մոմերը ձեռքներին կազմեցին Մեծ եղեռնի Ծիծեռնակաբերդի հուշարձանի սյուները և հայոց անմար, անհաղթ ու անպարտելի կրակը:

Քանի որ միջոցառումը հանրակրթական Մայրության և զեղեցկության միամյակին, ուստի աշակերտներն ստեղծված հարմար առիթը բաց չթողեցին և հանդես եկան ֆրանսերեն, հայերեն և ռուսերեն շնորհավորանքներով, ինչպես նաև բանաստեղծություններ ձևեցին սիրելի մայրերին, ուսուցիչներին և ջուրերին, ու ապա հնչեց «Մայրիկ» երգը՝ դպրոցի սան էլինա Մանգասարյանի կատարմամբ: Ֆրանսախոսության օրերին նվիրված միջոցառումն ավարտվեց ֆրանսիական «Օ շանգ էլիզե» երգի կատարմամբ:

Միջոցառման վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ ֆրանսերենի ուսուցչուհի Յանա Մկրտչյանը, ով նշեց, որ նպատակ էին հետապնդում ներկայացնել ֆրանսիան և ֆրանսերենի պերճությունը, ու ապա ավելացրեց, որ լեզուն միայն քերականություն չէ, լեզուն ժողովրդի ժառանգությունն է, պատմությունը, դեմքը, մշակույթը: Միջոցառման վերաբերյալ իրենց գոհունակությունը հայտնեցին դպրոցի տնօրեն Արիա Գրիգորյանը և դպրոցի օտար լեզուների մեթոդիավորման նախագահ Հասմիկ Սեյրանյանը:

Յ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վերապատրաստումներ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Ուսուցիչների վերապատրաստման դասընթացները պետք է դիտարկել որպես գիտելիքների ամրապնդման շարունակական գործընթաց: Մշակվում է հոգևոր կոլեկտիվ կառուցվածք, որտեղ մարդն աչքի է ընկնում ակտիվության, մտքերի, զգացմունքների գործունեության միասնությամբ:

Մարտյան արձակուրդների օրերին անցկացվեցին ուսուցիչների հերթական խմբի վերապատրաստման դասընթացները:



Մարտյան արձակուրդների օրերին անցկացվեցին ուսուցիչների հերթական խմբի վերապատրաստման դասընթացները: Ես մասնակցում էի «Տեխնոլոգիա» առարկայի դասընթացներին: Խումբը բաղկացած էր 18 հոգուց:

Մեզ դասավանդում էր Սահակ Հովսեփյանը: Նա փորձում էր յուրաքանչյուրիս մեջ տեսնել ինքնահատատման և ինքնարտահայտման ուղիները:

Մենք դասընթացները սկսեցինք ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդով: Սկզբում բոլորը խու-

սափում էին ակտիվ մասնակցել, բայց պարոն Հովսեփյանն իր սեփական մեթոդով՝ համբերատարությամբ, կարողացավ գործունեության ուղղվածությունն ու կենտրոնացումը տանել դեպի կամք: Կամքը մարդու նպատակաուղղված ընդունակությունն է, մնում է կատարելագործել ուսուցման նոր ձևերն ու եղանակները:

Դասընթացներն անց էին կացվում խմբերով, որն ունեցավ իր հոգևոր և զեղազգիտական կարևորագույն նվաճումները մանկավարժների կյանքում: Բոլորը հստակ և նպատակալից օգտագործեցին գաղափարական դաստիարակության այդ մեթոդներն ու ձևերը:

Կազմվել էր չորս խումբ՝ արծվիկների, խառատների, աղավնիների, ծաղիկների: Մեր ղեկավարը հնտորեն համախմբեց բոլոր մանկավարժներին, անկաշկանդ մթնոլորտ ստեղծեց, հավատ՝ ազատ արտահայտվելու, մեկս մյուսին լսելու և կարծիք ստեղծելու գաղափարների և հնարքների շուրջ:

Խմբում վեց հոգի նկարիչներ էին՝ Գարունը, Հասմիկը, Ջուլիետան, Սմբատը, Նորայրը և ես: Ունեինք նաև ռուսախոս մանկավարժներ՝ Յուլիան, Էլենուրան, Գայանեն, որը նաև մեր ավագն էր: Նրա մեկնաբանություններն ու տրամաբանությունը մեզ հիացմունք էին պատճառում:

Սամվելն իր հումորով աշխուժացնում էր բոլորիս, Կարենը, Սոսն առանձնանում էին իրենց համոզականությամբ: Ձեմֆիրան, Ռուզաննան, Գայանեն, Լիանան, Ջարիենն, Մանյան աչքի ընկան իրենց դատողություններով, կրթական մակարդակով:

Մի խոսքով՝ ԼԴՀ հանրակրթական դպրոցների ուսուցիչների նախատեսարանում 80-ամյա վերապատրաստման դասընթացների շնորհիվ շփվեցինք միմյանց հետ, ստացանք շրջապատող աշխարհն իմաստավորելու արդիական դատողություններ, ինչի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում դասընթացները վարողներին ու կազմակերպիչներին:

Գայանե ԳԵՎՈՐԳՅԱՆ  
Հարրուփի շրջանի Ծամռոի մ/ճ ուսուցչուհի

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՆՈՒՌԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ



Երբ դուք ինչ-որ բան եք կարողում, հիշում եք 10%-ը, երբ ինչ-որ բան եք լսում, հիշում եք 20%-ը, երբ ինչ-որ բան եք տեսնում, հիշում եք 30%-ը, երբ ինչ-որ բան տեսնում և լսում եք, հիշում եք 50%-ը, երբ ինչ-որ բան արել եք ինքնուրույն, դուք հիշում եք 90%-ը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ՆՈՒՌԻ Թրաքի կողմից առաջարկվել է նախագիծ, որի առանցքային նպատակներն են՝ «Հիշել» և «Տարածել»: Այն նախատեսված է իրականացնել երկու փուլով: Առաջին փուլում, հաշվի առնելով աշակերտների տարիքը, նրանց կծանոթացնեն 1915 թվականի եղբարկան իրադարձություններին, հնարավորինս մատչելի ցույց կտրվեն պատմական իրողությունները, աշակերտներին կուղղորդեն այնպիսի գործողություններով, որ նրանք առավելագույնս ընկալեն թեման: Երկրորդ փուլում աշակերտներն արդեն ինքնուրույն կիրականացնեն աշխատանքներ թեման տարածելու համար: Որոշ աշխատանքներ կցուցադրվեն «Չվարթնոց» օդանավակայանում, երկրի այլ կարևոր վայրերում: Այս ամենը տեղ կգտնի լրատվամիջոցներում:

Ինչու, որի նպատակն է սփյուռքահայ երիտասարդներին հրավիրել Հայաստան, ծանոթացնել Մայր հայրենիքի հետ, որտեղ նրանք կկատարեն որոշակի կամավորական աշխատանքներ՝ ըստ մասնագիտական կարողությունների: Այդ աշխատանքներն իրականացվելու են թե՛ շինարարության, թե՛ գյուղատնտեսության և թե՛ գիտության ու կրթության ոլորտներում: «Ծննդյան իրավունք» ծրագրի կամավորականներից է Նատալի Գևորգյանը՝ Արգենտինայից: Նա հոգեբան է: Աշխատում է Բուենոս Այրեսի Միլիթարյան վարժարանում: Լավ ծանոթ է ՆՈՒՌԻ Թրաքիին: Նա ցանկություն է հայտնել Արցախում աշխատելու ու անչափ ուրախ էր մնան հնարավորություն ստանալու համար: Եվ մեծ հաճույքով ընդունեց մեր առաջարկը: Նատալիին հաջողվեց չորս շաբաթվա ընթացքում հսկայական աշխատանք իրականացնել Ստեփանակերտի բոլոր դպրոցներում՝ ՆՈՒՌԻ Թրաքիին հատկացվող դասաժամերի ցանկին համապատասխան: Նա իր ժամանակը և ուժերը նվիրաբերեց ուսուցիչներին՝ կիսելով իր փորձը ու հմտությունները, հնարավորինս օգնելով եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ ՆՈՒՌԻ Թրաքի կողմից առաջարկվող նախագծի իրականացմանը: Համոզված ենք, որ կօժանդակեք մնան հայրենատենչ երիտասարդներին՝ ի կատար ածելու իրենց երազանքները՝ իրենց լուծման ներդրելու Արցախում իրականացվող ուսումնական ծրագրերի իրագործման մեջ: Մարտի 29-ին Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ «ՀԲԸՍ-88» համաժողովի շրջանակներում Արցախ էին այցելել մի խումբ մասնակիցներ, ովքեր ներկայացնում էին ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Մեքսիկայի, Ուրուգվայի, Բուլղարիայի, Ուկրաինայի, Իրաքի, Սիրիայի, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի հայ համայնքները: Մասնակիցները ծանոթացան Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների հետ և ներկա եղան հայոց պատմության մի դասի (ուսուցիչ՝ Գայանե Ղուկասյան):

Դասի մասնակիցների ուշադրությանը ներկայացվեցին Ցեղասպանությունից դրվագների, Եղեռնի ընթացքում տեղի ունեցած դեպքերի, հայությանը այդ ժամրագույն ժամանակներում ձեռք մեկնած միսիոներների, Եղեռնը դատապարտած պետությունների, ինչպես նաև Ցեղասպանության հետևանքների վերաբերյալ աշակերտների կողմից համակարգիչներով պատրաստված նյութերը՝ համապատասխան մեկնաբանություններով: Ըստ ժամանակացույցի՝ մայրաքաղաքի հիմնական դպրոցների ուսուցիչները:

Դասի թեման էր՝ «Ալեքսանդր Մակեդոնացի», նոր դասի թեման՝ «Հելլենիստական աշխարհը»: Աշակերտները պետք է իմանային, որ Ալ. Մակեդոնացու մահից հետո նրա տերությունը տրոհվեց: Առաջացան քսանից ավելի հելլենիստական պետություններ: - Եգիպտոսի հիմնադրման ժամանակաշրջանը, գյուղացիների վիճակը, աշխատանքը, տեսության և պրակտիկայի միավորում, - մասնակիցների փորձի հարստացում, - մասնակիցների ընկալման, յուրացման, փոխըմբռնման դյուրացում: Դասաժամի վերջում նորույթ էր 5-10 րոպե տևողություն պահանջող թեստային աշխատանքի կատարումը 6-րդիցների կողմից, որն իրականացվեց և միաժամանակ զնահատվեց համակարգիչ օգնությամբ: Այդ ծրագիրը թեստային առաջադրանքով մշակվեց Excel-ում՝ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցչուհի Մարինե Հարությունյանի կողմից:



Վերջում կցանկանայի ևս մեկ անգամ շեշտել, որ դասի ժամանակ համակարգչային աշխատանք կատարելով, դասընթացն ու կամակարգիչը միմյանց հետ համադրելով՝ մենք անհամեմատելիորեն կբարձրացնենք ուսուցման որակը: Անշուշտ, միայն համակարգչային աշխատանքներ կատարելով, այսինքն՝ առանց ուսուցիչների ակտիվ մասնակցության անհնար կլինի հաջողության հասնել: Անհրաժեշտ է ուսուցիչներին հնարավորինս օգնել վերապատրաստելով, մեթոդական ու ինֆորմացիոն փորձ փոխանակելով: Նման աշխատանքները ոչ միայն անարդյունք չեն մնա, այլ նաև նոր անկարողակի վրա կբարձրացնեն կրթությունը Արցախում:



Վերջում կցանկանայի ևս մեկ անգամ շեշտել, որ դասի ժամանակ համակարգչային աշխատանք կատարելով, դասընթացն ու կամակարգիչը միմյանց հետ համադրելով՝ մենք անհամեմատելիորեն կբարձրացնենք ուսուցման որակը: Անշուշտ, միայն համակարգչային աշխատանքներ կատարելով, այսինքն՝ առանց ուսուցիչների ակտիվ մասնակցության անհնար կլինի հաջողության հասնել: Անհրաժեշտ է ուսուցիչներին հնարավորինս օգնել վերապատրաստելով, մեթոդական ու ինֆորմացիոն փորձ փոխանակելով: Նման աշխատանքները ոչ միայն անարդյունք չեն մնա, այլ նաև նոր անկարողակի վրա կբարձրացնեն կրթությունը Արցախում:

Վերջում կցանկանայի ևս մեկ անգամ շեշտել, որ դասի ժամանակ համակարգչային աշխատանք կատարելով, դասընթացն ու կամակարգիչը միմյանց հետ համադրելով՝ մենք անհամեմատելիորեն կբարձրացնենք ուսուցման որակը: Անշուշտ, միայն համակարգչային աշխատանքներ կատարելով, այսինքն՝ առանց ուսուցիչների ակտիվ մասնակցության անհնար կլինի հաջողության հասնել: Անհրաժեշտ է ուսուցիչներին հնարավորինս օգնել վերապատրաստելով, մեթոդական ու ինֆորմացիոն փորձ փոխանակելով: Նման աշխատանքները ոչ միայն անարդյունք չեն մնա, այլ նաև նոր անկարողակի վրա կբարձրացնեն կրթությունը Արցախում:

Մարգարիտա ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆՈՒՌԻ արցախյան համակարգող

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԴԱՐԱՊՄՈՒՆԷ

Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցում կազմակերպված «Պատանի նկարիչ» խմբակային պարապմունքի թեման պատահականորեն չէր ընտրված: «Արցախյան տան անկյունը», այսպես է այն վերնագրվել ու ներկայացվել: Հստակ ու պարզորոշ էին պարապմունքի նպատակները. աշակերտներին ծանոթացնել Արցախյան դարավոր մշակույթին, սովորություններին, միատոկացին ու կենցաղին՝ նրանց մոտ դաստիարակելով ազգասիրություն, ավանդապաշտություն, դարերից եկած ավանդույթները արժևորելու, զննատեսելու և սերունդներին փոխանցելու հմտություններ և կարողություններ: Խմբակային պարապմունքը վարում էր երիտասարդ ուսուցչուհի Լուսինե Սահակյանը, որի աշխատանքային գործունեությունը մեր դպրոցում սկսվել է այս ուստարվանից, բայց նա հասցրել է իրեն դրսևորել որպես բանիմաց և

հմուտ մանկավարժ: Մանկավարժ, ով սիրում է իր աշխատանքը, երեխաներին, աշխատում է անձնվիրաբար՝ պատրաստական կատարելու ցանկացած հանձնարարություն: Պարապմունքին ներկա էին Ստեփանակերտի կրթության և սպորտի բաժնի մասնագետ Ա.Սեդրոյանը, մեթոդիստ Ա.Ավանեսյանը, դպրոցի տնօրինությունը, ուսուցիչները, խմբակավարժները: Ներկաներին հաճելի անակնկալ էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

Ստեղծված էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

Ստեղծված էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

Ստեղծված էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

տակները. աշակերտներին ծանոթացնել Արցախյան դարավոր մշակույթին, սովորություններին, միատոկացին ու կենցաղին՝ նրանց մոտ դաստիարակելով ազգասիրություն, ավանդապաշտություն, դարերից եկած ավանդույթները արժևորելու, զննատեսելու և սերունդներին փոխանցելու հմտություններ և կարողություններ: Խմբակային պարապմունքը վարում էր երիտասարդ ուսուցչուհի Լուսինե Սահակյանը, որի աշխատանքային գործունեությունը մեր դպրոցում սկսվել է այս ուստարվանից, բայց նա հասցրել է իրեն դրսևորել որպես բանիմաց և

հմուտ մանկավարժ: Մանկավարժ, ով սիրում է իր աշխատանքը, երեխաներին, աշխատում է անձնվիրաբար՝ պատրաստական կատարելու ցանկացած հանձնարարություն: Պարապմունքին ներկա էին Ստեփանակերտի կրթության և սպորտի բաժնի մասնագետ Ա.Սեդրոյանը, մեթոդիստ Ա.Ավանեսյանը, դպրոցի տնօրինությունը, ուսուցիչները, խմբակավարժները: Ներկաներին հաճելի անակնկալ էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

Ստեղծված էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

Ստեղծված էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:

Ստեղծված էր սպասում կերպարվեստի կաթինետում: Այնտեղ ստեղծված էր արցախյան կոլորիտ. հին կարպետի վրա իրար ջով շարված էին խնոցի ու երկանքը, սանդեղը ու ճախարակը, տարբեր չափերի կծեր և գորգեր: Ոգևորող էր նաև աշակերտների տեսքը. նրանք կրում էին իրենց իսկ ձեռքերով զարդանախշած թղթե գլխարկներ, իսկ պատերը զարդարում էին արցախյան կյանքը պատկերող նկարներ, որոնք երեխաների ձեռքի աշխատանքներն էին: Աշակերտները ներկաներին ողջունեցին արցախյան բարբառով՝ հնչեցնելով օրհնանքներ ու բարեանդամներ: Այնուհետև մեկնաբանեցին, թե ինչ իմաստ են արտահայտում գրատախտակին գրված բառերը (տրամադրող, ուշադիր և նախաձեռնող), ինչ կապ կա այդ բառերի և թեմայի միջև:



Սուսաննա ԱՏԵՓԱՆՅԱՆ Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի փոխտնօրեն

ԲԱՑ ԴԱՍ

ԹԵՄԱՆ՝ ՄԵՑ ԵՂԵՈՆ

Յուրաքանչյուր հայի սուրբ պարտքն է մասնակցություն ունենալ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին, որոնց նպատակը հայ ժողովրդի ամենաողբերգական ու ցավոտ էջը ներկայացնելն է:

Ապրիլի 2-ին Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում մայրենիից կազմակերպված բաց դասը 6-րդ դասարանում յուրօրինակ հարգանքի տուրք էր բյուրավոր անմեղ զոհերի հիշատակին, Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին, որի կազմակերպիչն էր դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդավորման նախագահ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռիմա Մելքոնյանը:

Վարպետորեն էր մտածված դասի ամբողջ ընթացքը, ծրագրված յուրաքանչյուր թուղթի հստակ անելիքը, ճիշտ էին ընտրված դասի վարման մեթոդներն ու եղանակները, որոնք լիովին համապատասխանում էին երեխաների տարիքային առանձնահատկություններին ու թեմային: Դասի թեման և պատահականորեն չէր ընտրված. Մուշեղ Գալշոյանի «Կռուկներ»-ը ներկայացնում էր հայ

գաղթականի ծանր հոգեվիճակը, սրտակեղծք ապրումները և ոգու ամրությունը, որը շատ ճիշտ մեկնաբանվեց ու ըմբռնվեց աշակերտների կողմից:

Դասի սկզբից մինչև վերջ կարմիր թելի պես անցնում էր հայրենասիրության ու հայեցի դաստիարակության վեհ գաղափարը: Դիպուկ էր ընտրված դասի կարգախոսը: Դրանք Մուշեղ Գալշոյանի հայտնի խոսքերն էին. «Հայոց մեծ եղեռնը բարբարոսություն է, ծանրագույն ու անմեղելի հանցանք, մենք պահանջատեր ենք, բողոքում և ընդվզում ենք ընդդեմ անարդար աշխարհի, որովհետև մեր դատն արդար է»:

Դասը կահավորված էր ամերիաժեշտ դիտողականությամբ, տեխնիկական միջոցներով, որոնք ծառայեցին իրենց նպատակին:

Դասի հենց սկզբից աշակերտները սրտի ցավով ու կակիծով ներկայացրին Մեծ եղեռնը դատապարտող

ատույթներ, խոսեցին թուրքական յաթաղանին զոհ զնացած 781 հայ մտավորականների և 2 միլիոն 640 հազար հայ մարդկանց եղերական վախճանի մասին:

Ամրոդարձ կատարվեց «Իմ երկրի մեծ պաշար՝ հետաքրքիր ու գանազան տեղեկություններ Մ. Գալշոյանի, Կոմիտասի կյանքի ու գործունեության մասին: Գրավիչ, գրագետ ու հուզական էր ուսուցչուհու խոսքը: Նա տեղին ու ճիշտ եզրահանգումներ ու ընդհանրացումներ էր անում, կարողանում դասն ընթացքավորել վարպետորեն: Ուշագրավ էր այն փաստը, որ երեխաների գիտելիքները չէին սահմանափակվում միայն դասագրքային տեղեկություններով, աշակերտները քաջատեղյակ էին Կոմիտասի 20-ամյա երաժշտական-հասարակական գործունեությանը:

Վարկուրվեց հայ դասական արվեստի, հայ ժողովրդի երգի դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում:

Հետաքրքիր և հուզիչ էին աշակերտների՝ Կոմիտասի երգերի կենդանի կատարումները՝ մերթ տխուր «Կռուկներ», մերթ զվարթ «Լորիկներ» ու «Շողեր ջան»-ը: Կշռադատման փուլում աշա-

կերտները տեքստի հատվածների համար մտածում էին վերնագրեր և բովանդակությունը վերարտադրում ըստ կազմած վերնագրերի:

Դասին տեղ տրվեց նաև բառային ու տեքստային աշխատանքների, իսկ քերականական առաջադրանքների միջոցով ստուգվեցին աշակերտների գիտելիքները «Բառագիտություն» ու «Բառակազմություն» թեմաներից:

Դասի ընթացքում իրար էին հաջորդում երգն ու երաժշտությունը, երեխաների արտահայտիչ ասումներն ու հետաքրքիր պատմությունները, ուսուցչուհու գրագետ ու հուզիչ խոսքն ու աշակերտների ամբողջական պատասխանները:

Դասն ուսանելի էր, հետաքրքիր, և ներկա գտնվող յուրաքանչյուր ուսուցիչ սովորելու և ընդօրինակելու որևէ բան տարավ իր հետ:

Սուսաննա ՍՏԵՓԱՆՅԱՆ  
Սրբեկ. հ. 6 հիմն. դպրոց

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՇՆԱՋ ՄԱԿԱՐԳԱԿՈՎ

Օրերս Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի 11-րդ հունամիտար-1 դասարանում կազմակերպվեց անգլերենի բաց դաս «Ձանգվածային լրատվամիջոցներ» թեմայով: Դասը վարում էր դպրոցի անգլերենի ուսուցչուհի Անժելա Բաբայանը: Ներկա էին դպրոցի տնօրինությունը, Ստեփանակերտի ավագ և միջնակարգ դպրոցների ուսուցիչներ, հյուրեր, ծնողներ:

Յուրաքանչյուր բաց դաս դրական և նորարարական փորձի փոխանակման, մեթոդական արդիական գաղափարների ու հնարների իրականացման, սովորողների ուսումնական խնդիրների լուծման, հմտությունների զարգացման մեթոդիկայի ճանաչման միջոց է: Այս առումով օտար լեզվի դասավանդումն ունի ևս մեկ գերխնդիր, այն է՝ սովորողի խոսակցական լեզվի, օտար լեզվով միմյանց հետ շփվելու, օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների զարգացումը: Սրանից հետո է միայն հնարավոր դառնում աշակերտների կողմից նյութի ամբողջական ընկալումը, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու գաղափարների համադրումը, իմաստավորումը և գնահատումը, ինչը խթանիչ գործոն պիտի դառնա սովորողների ճանաչողական գործունեության համար:

Հաշվի առնելով, որ հայ իրականության մեջ սովորողները զուրկ են լեզվակիր միջավայրի հետ շփման հնարավորությունից՝ նշված հմտությունների զարգացումը, անշուշտ, միմյայն ուսուցչի արհեստավարձ աշխատանքի արդյունք է: Դասապրոցեքը փուլային կառուցվածք ունի՝ ընթացում էր առանձին խոսքային գործողությունների մշակումից մինչև խոսքային ամբողջական գործունեություն, ինչը ենթադրում է քննարկումների համար անկաշկանդ մթնոլորտի ստեղծում, որտեղ ուսուցիչն ուղղորդում էր աշակերտներին՝ ինքնուրույն հասնել թեմայի վերաբերյալ եզրահանգումների՝ հավատարիմ մնալով Ա. Դիստերվեգի այն գաղափարին, որ լավ ուսուցիչը ոչ թե մատուցում է ճշմարտությունը, այլ օգնում է այն հայտնաբերել: Թեմատիկ բառա-

րի եզրահանգումը մեկն էր՝ 21-րդ դարը տեղեկատվության դարաշրջան է, և նոր սերունդը համացանցի և բարձրակարգ տեխնոլոգիաների զարգացման ջատագովն է: Այդ մասին էր վկայում նաև խորագիրը, որ ընտրվել էր դասի համար. «He who owns the information he owns the world»: Որպես նշվածի ապացույց՝ աշակերտները, օգտագործելով իրենց տեխնիկական հնարավորությունները, պատրաստել էին տեսանյութ լրատվամիջոցների և դրանց կից տեխնոլոգիաների առաջընթացի մասին ոչ վաղ անցյալից մինչև մեր օրերը՝ ցույց տալու, թե հաղորդակցության և տեղեկատվության համար ինչ նպաստավոր պայմաններ կան: Վերջում լրահոսի տեսքով աշակերտներն անդրադարձան Դարաբաղյան և ընդհանրապես հայ իրականության ամենաարդիական թեմաներին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին և գալիք խորհրդարանական ընտրություններին: Լրահոսում տեղ էին գտել դասարանի աշակերտների պատրաստած հարցազրույցներն ավագ դասարանի մի խումբ աշակերտների հետ նշված թեմաների շուրջ: Աշակերտներն ինքնավարապես էին, նրանց մոտ ակնհայտ էր անգլերեն բանավոր խոսքի ձևավորված



պաշարի կրկնությունից հետո Աճե-լա Բաբայանը աշակերտների ներգրավումը դասապրոցեքին իրականացրեց թեմայի շուրջ անհատական և խմբային հարցադրումների միջոցով, կիրառեց բանախոսական տարբեր հնարներ, որոնք միտված էին սովորողների մեջ փաստերը վերլուծելու, սեփական դատողություններ անելու ունակությունների ձևավորմանը, ինչպես նաև լեզվական ու քերականական անհրաժեշտ նյութի ամրապնդմանը: Ուշագրավ էին աշակերտների քննարկումները լրատվամիջոցների, մասնավորապես՝ համացանցի դերի մասին ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրականության մեջ, վերջինիս առավելությունների և թերությունների մասին դատողությունները՝ ելնելով նոր սերնդի պահանջներից: Անշուշտ, սովորողներ-

մշակույթը՝ խոսքի արտահայտչականությամբ և շփման մեջ մտնելու ունակության առկայությամբ: Իսկ ուսուցչուհին ի սկզբանե կարևորեց ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և դասի վերջում էլ, ամրապնդելով աշակերտների հետ հետադարձ կապը, հայտարարեց, որ նրանք տնային հանձնարարությունը կատարեն էլեկտրոնային տարբերակով՝ [dasar.am](http://dasar.am) կայքէջով:

Անժելա Բաբայանի դասն ապահովում էր գիտական պատշաճ մակարդակ, ընդգրկում էր վերլուծական և համեմատական տարրեր՝ հագեցած փաստերով և, ինչն ամենակարևորն է, այն դասավանդման աշակերտակենտրոն ձևի բացառիկ դրսևորումներից էր:

Մրցույթի ավարտին մասնակիցներին ուղղված շնորհավորանքի և շնորհակալության խոսք ասաց Մարտունու արվեստի դպրոցի տնօրեն Ալվինա Միրզոյանը: Նա նշեց, որ բավականին լուրջ և գնահատելի աշխատանք է կատարվել, և ելույթները մի առանձին ուրախություն ու ոգևորություն, գեղափոխական հաճույք պարգևեցին ներկա գտնվողներին: Մասնակիցների կատարած առանձնանուն էր նաև նրանով, որ լինելով ընտանիքի մայր, տանտիկին, սեփական փխրուն ուսերին առնելով առօրյա կենցաղային ոչ պակաս կարևոր հոգսերը, նաև աշխատանքային պարտականությունները՝ ժամանակ են գտել ու դրանց համատեղել մրցույթին համոզեց գալու լուրջ աշխատանքը:

Այս մրցույթն անմախաղեպ էր: Չնայած մասնակիցներն այնքան էլ շատ չէին, բայց կարելի էր եզրակացնել, որ կունենա իր դրական և կարևոր դերակատարությունը: Յուրաքանչյուր մրցույթ հնարավորություն է ինչպես սեփական կարողությունների ցուցադրման, այնպես էլ նոր գիտելիքների ձեռքբերման համար: Մասնակիցների մոտ այս տրամադրությունն էր. ինչքան հաճախակի կազմակերպվեն նման միջոցառումներ, հաճախակի ստեղծվի միայնակ հետ շփվելու, ծանոթանալու հնարավորություն, այնքան հաջողություն կունենա ընդհանուր գործը:

Անգլերենի առարկայական մեթոդավորում

Անգլերենի առարկայական մեթոդավորում

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹ ՆԱԽԱԳՊՐՈՋԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԻՍՐԱՎՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ապրիլի 9-ին ԼՂՀ ԿԳ նախարարության նախադպրոցական և արտադպրոցական բաժնի նախաձեռնությամբ շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի կողմից երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդհանուր կազմակերպվեց գեղարվեստական մրցույթ շրջանի նախադպրոցական հաստատությունների դաստիարակների միջև: Մասնակցում էին դաստիարակներ, երաժշտական ղեկավարներ, պարուսույցներ Մարտունու հ. 1 և 2, ճարտարի, Կարմիր Շուկայի, Բերդաշենի, Սոսի մանկապարտեզներից: Ներկայացվեցին երկուական երգ (ժողովրդական, դասական, էստրադային), ասումներ (հայրենասիրական), պար (ժողովրդական, ժամանակակից):

Երգերի կատարումներով լավագույն ճանաչվեցին Մարտունու հ. 2 մանկապարտեզի երգչախումբը (Անուշ Ջիվանյան, Ալյոնա Գրիգորյան, Լուսինե Խաչատրյան, Նինա Սարգսյան, Վարդուհի Միրզոյան)՝ Արմեն Սմբատյանի «Հայաստան» և Մարտունու հ. 1 մանկապարտեզի դաստիարակ Գայանե Հայրունյանը՝ «Դե յաման» երգերի կատարման համար: Ասումներում առաջին տեղը գրավեց Մարտունու հ. 1 մանկապարտեզի դաստիարակ Դիանա Մարտիրոսյանը՝ Դովհանես Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծության արտասանության համար, իսկ պարի մրցույթում առավել բարձր միավորներ շահեցին Մարտունու հ. 2 մանկապարտեզի ներկայացուցիչներ Անուշ Ջիվանյանը, Ալյոնա Գրիգորյանը և Նինա Սարգսյանը՝ «Ծաղկած բալենի», Մարտունու հ. 1 և Բերդաշենի մանկապարտեզների երաժշտական ղեկավարներ Կարինե Էմիրյանը և Նանար Դովհանյանը՝ «Ուզունդարա» պարերի կատարումների համար:



Մրցույթի ավարտին մասնակիցներին ուղղված շնորհավորանքի և շնորհակալության խոսք ասաց Մարտունու արվեստի դպրոցի տնօրեն Ալվինա Միրզոյանը: Նա նշեց, որ բավականին լուրջ և գնահատելի աշխատանք է կատարվել, և ելույթները մի առանձին ուրախություն ու ոգևորություն, գեղափոխական հաճույք պարգևեցին ներկա գտնվողներին: Մասնակիցների կատարած առանձնանուն էր նաև նրանով, որ լինելով ընտանիքի մայր, տանտիկին, սեփական փխրուն ուսերին առնելով առօրյա կենցաղային ոչ պակաս կարևոր հոգսերը, նաև աշխատանքային պարտականությունները՝ ժամանակ են գտել ու դրանց համատեղել մրցույթին համոզեց գալու լուրջ աշխատանքը:

Այս մրցույթն անմախաղեպ էր: Չնայած մասնակիցներն այնքան էլ շատ չէին, բայց կարելի էր եզրակացնել, որ կունենա իր դրական և կարևոր դերակատարությունը: Յուրաքանչյուր մրցույթ հնարավորություն է ինչպես սեփական կարողությունների ցուցադրման, այնպես էլ նոր գիտելիքների ձեռքբերման համար: Մասնակիցների մոտ այս տրամադրությունն էր. ինչքան հաճախակի կազմակերպվեն նման միջոցառումներ, հաճախակի ստեղծվի միայնակ հետ շփվելու, ծանոթանալու հնարավորություն, այնքան հաջողություն կունենա ընդհանուր գործը:

Կարինե ԴԱՎԱՍՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ

ԸՆԴՈՐԻՆԱԿԱՆ ԴԱՍԵՐԻ ԶՂՅԱ Ը. 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Վատ ուսուցիչը մատուցում է ճշմարտությունը, իսկ լավ ուսուցիչը օգնում է հայտնաբերել այն:

Ա. Դիստերվեզ

Այս խոսքերի վառ ապացույցն էր ապրիլի 3-ին Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի տարրական դասարաններում կազմակերպված բաց դասերի շղթան, որը դպրոցի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումների շարքից էր:

Կազմակերպված բոլոր դասերն էլ հիփ համակարգով էին՝ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և բազմաբնույթ հնարների ու մեթոդների կիրառմամբ, ժամանակակից ու ավանդական մեթոդների համադրմամբ:

- Բարև՝ ձեզ, բարություն՝ ձեզ,
- Ժպիտներ ու ծաղիկներ ձեզ,
- Բարի՝ բարի լուրեր ձեզ:

Այս խոսքերով դիմավորեցին հյուրերին 1-ին «ե» դասարանի աշակերտները (դասվար՝ Անժելա Պետրոսյան): Այնուհետև սկսվեց 6 տարեկանում աշակերտ դարձածների՝ 6 ամսում ձեռք բերած գիտելիքների ցուցադրումը՝ ասույթներ մաթեմատիկայի՝ գիտությունների թագուհու մասին, բանաստեղծությունների՝ թվանշանների, թվաբանական գործողությունների, երկրաչափական պատկերների մասին, մաթեմատիկական թելադրություն և ինքնաստուգում՝ էկրանի միջոցով:

Վարպետորեն անցում կատարելով հաջորդ՝ «Իմաստի ընկալման» փուլ, ուսուցչուհին համատեղեց տարբեր աշխատանքներ՝ աշխատանք տեսասահիկներով, թվային հովհարներով, պաստառներով և աշխատանք՝ գրատախտակին: Էկրանին երևում են թվային արտահայտություններ: Աշակերտները բանավոր հաշվում են դրանց արժեքները և պարզում, որ յուրաքանչյուր սյունակի վերջին արտահայտությունը դժվարանում են հաշվել: Ցավոք, բոլոր ուսուցիչները չէ, որ կարևորում են խաղ-ուսուցում, խաղ-գործընթացը: Անժելա Պետրոսյանը հասկացել էր այդ և նոր՝ «20-ի սահմանում գումարում և հանում» կարգային անցումով՝ նյութն ուսուցանեց դերային խաղով. դերասաններն աշակերտներն էին.

- 7-ը դիմում է 5-ին.
- 3 միավոր հնձ կտա՞ս,
- Որ ես դառնամ կլոր 10,
- Դու էլ դառնաս արդեն 2,
- Իսկ միասին՝ 12:

Աշակերտները հետաքրքրված լուծում էին նաև խնդիրները՝ առանձնացնելով նրա բաղադրանասերը՝ պայման, պահանջ, լուծում և պատասխան:

Այս ամենին լրացնելու էին գալիս երաժշտական դադարները, տրամաբանական, հետաքրքրաշարժ ու կատակ-խնդիրները. «Կա կաղնու երեք ծառ: Յուրաքանչյուր ծառին կա երեք խնձոր: Քանի՞ խնձոր կա այդ ծառերին»: Կշռադատման փուլում կազմակերպված «Նստեցրու թիթեռ ծաղկին» զույգերով խաղի առաջացրած աշխատանքային հանելի աղմուկը հիացրեց բոլորին:

Հաջորդ բաց դասը 2-րդ «բ» դասարանում էր՝ մայրենի առարկայից (դասվար՝ Անահիտ Գրիգորյան): Երկրորդ դասարանցուն ներկայացվող պահանջները, բնականաբար, ավելանում են՝ նոր բառերի, արտահայտությունների ներմուծում, գեղեցիկ, պատկերավոր ձևով սեփական կարծիքը հիմնավորելու, հարցադրումներ անելու կարողությունների ձևավորում:

Դասարանը, ուսուցչուհին, աշակերտներն ազդարարում էին թեման՝ «Գարուն է եկել»:

Ամփոփելով «Երկնքից երեք խնձոր ընկավ» թեման՝ աշակերտները ցույց տվեցին իրենց ոչ միայն գրականագիտական, այլև լեզվական նախագիտելիքները: «Հեքիաթ», նրա բնորոշումը, տեսակները, սկիզբը, ավարտը, բարոյ և ածանցավոր բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, տեսասահիկներով հեքիաթների գուշակում, «Սուտասանը» հեքիաթի բեմականացում, երաժշտական դադար՝ «Հեքիաթ» երգը: Յուրահատուկ վերջաբան ուներ 2-րդ «բ» դասարանցիների հեքիաթը՝ երկնքից ընկած երեք խնձորները բաժին ընկան. մե-

կը՝ հեքիաթ գրողին, մեկը՝ 2-րդ «բ» դասարանին, մեկն էլ՝ այդ օրվա իրենց հյուրերին:

Ուսուցչուհին իր մեղմ ու խորհրդավոր ձայնով սահուն կերպով անցում կատարեց նոր նյութին:



Խթանման փուլ. փուլիցներով հանելուկների և համապատասխան նկարներով տարվա եղանակների գուշակում: Իսկ ընկեր Գրիգորյանի փուլից-հանելուկն արցախցիների դարավոր երազանքն էր՝ խաղաղություն: Աշակերտներին հարցեր էր բերել նաև արևն իր շողերով:

- Ի՞նչ է ի սիրում գարունը:
- Չարություն, կոպտություն, դաժանություն:
- Իսկ ի՞նչ է սիրում գարունը:
- Աշխատասիրություն, ծառատունկ, վար ու ցանք, խաղաղություն:

Իմաստի ընկալման փուլում բազմազան էին աշակերտների հարցերը՝ տեղեկությունները գարուն եղանակի մասին. ասացվածքներ, կապակցված խոսք՝ «Գարուն» բառի տառերով՝ «Աքրոստիկոս» մեթոդի կիրառմամբ: Կիրառվեց նաև «Քառաբաժանում» մեթոդը, որին հաջորդեց երաժշտական դադար՝ «Անձրևի կաթիլները» հիասքանչ երաժշտությունը:

Կշռադատումը կազմակերպվեց խմբային



աշխատանքի ձևով: Յուրօրինակ էր VI խմբի առաջադրանքը՝ «Գարուն» եղանակի բնութագրություն՝ անուն-ազգանունը, բնակության վայրը, տարիքը, ազգականները, գույները, բնավորությունը:

Այս դասի տրամաբանական շարունակություն էր Ռեզինա Աղամյանի 3-րդ «գ» դասարանում կերպարվեստից կազմակերպված «Ծաղկած ծառեր» թեմայով դասը: Աշակերտներն ազդարարեցին դասի մուտքը.

- Երկինք ու երկիր մեզ ձայն են տալիս,
- Դռները բացվեց, գարուն է գալիս...

«Կերպարվեստ» առարկայի նշանակությունը, տեղեկություններ նկարիչների, բնանկարի, դիմանկարի, նատյուրմորտի մասին: Եվ նորից տեղեկություններ, բանաստեղծություններ, հանելուկներ գարնան մասին: Խմբային-համագործակցային աշխատանք գուշակով և գույնգույն մատիտներով ծաղկած ծառերի նկարում, ափսեների ձևավորում: Իսկ հետո աշակերտները

սպիտակ և վարդագույն ծաղիկներով զարդարեցին պաստառներին նկարված բալի և դեղձի ծառերը: Ամբողջ դասն ընթանում էր տեսասահիկների ցուցադրմամբ: Ուսուցչուհին անընդհատ ուղղորդում էր աշակերտներին և հարցեր ուղղում նրանց: Աշակերտները տալիս էին գրագետ և ճիշտ պատասխաններ. բնության մեջ կան հիմնական և բաղադրյալ, տաք և սառը գույներ: Տաք գույները՝ կարմիրը, դեղինը, նարնջագույնը, մարդկանց հանգստացնում են, իսկ սառը գույները՝ երկնագույնը, կապույտը և մանուշակագույնը, մարդուն զվարճացնում են, դարձնում համարձակ: Ուսուցչուհու նպատակն էր զարգացնել աշակերտների նկարչական կարողությունները, գեղագիտական ճաշակը, ձևավորել գեղեցիկն զգալու, գնահատելու և արարելու ցանկություն ու կարողություն, աշակերտների մոտ սեր առաջացնել դեպի բնություն-



ը, և նա հասավ իր նպատակին: Իսկ «Բարության ծառը» երգը բարություն սերմանեց դասալսողների հոգում:

Հերթական բաց դասը 4-րդ «դ» դասարանում էր (դասվար՝ Գայանե Հայրապետյան)՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայից: Դասի թեման էր՝ «Անտարկտիդայի հայտնագործումը և



հետազոտումը»:

Դասն ուներ հետաքրքիր ու զարմանալի սկիզբ, ընթացք ու ավարտ: Ինտերգրված ուսուցումը հնարավորություն է տալիս միջառարկայական կապերի արդյունքում ձևավորել ամրապնդել գիտելիք-կարողություն-հմտություն կապը: Եվ դա շատ լավ էր գիտակցել դասվար Գայանե Հայրապետյանը: Իրականացնելով դասի իր առաջադիր ուսուցանող, զարգացնող դաստիարակող, նաև մեթոդական նպատակները՝ ուսուցչուհին շատ մատչելի ձևով աշակերտների ընկալունակությանը հասցրեց նոր նյութի բովանդակությունը: Դասագործընթացում կիրառելով ուսուցման բազմաբնույթ տեխնոլոգիաներ՝ ուսուցչուհին ներկայացրեց շատ հետաքրքիր դաս, որտեղ ուսուցումն աշակերտակենտրոն էր, խնդրահարույց, զարգացնող, համագործակցային, տեղեկատվական, ճանաչողական: Ուսուցչուհին միայն ուղղորդող ուղեղն էր:

Դասարանի 5 խմբերի անդամները, ընտրելով իրենց խոսնակներին, «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդով ներկայացրին Յնդկաստանը, Չինաստանը, Աֆրիկան, Ավստրալիան: Մայրենի լեզուն՝ որպես այդպիսին, անընդհատ է և ամենուր, այն առկա է գործունեության բոլոր ձևերում: Դա գիտակցելով՝ Գ. Հայրապետյանը այն հասցրել է իր սաների գիտակցությանը: Աշակերտները խոսում էին վստահ, սահուն, մաքուր և գեղեցիկ հայերենով:

Գրատախտակին հավաքելով Ավստրալիայի խճանկարը՝ աշակերտներն ընտրովի հարցմամբ պատմեցին համեմարարված հին դասը՝ «Ավստրալիայի հայտնագործումը»: Հարուստ էին աշակերտների հարցողիկ լրացուցիչ տեղեկությունները դրոշի, զինանշանի, կենդանուրի, դինգո շան, կոալայի, էվկալիպտի, Կուկի և Թասմանի ճանապարհորդությունների մասին: Այս բոլորը տեսասահիկներով ցուցադրվում էր էկրանին: Ուսուցչուհու խոսքը, լեզուն, ոճը, վերաբերմունքը հաճելի էին ու տրամադրող: Հին նյութի ամփոփումն ու նորի խթանումը կատարվեց մեծադիր խաչբառի լուծումով, որի հիմնաբառը «Անտարկտիդա»-ն էր. «Անտարկտիդա»՝ «Արկտիկայի» հակադրություն:

Ստեղծելով խնդրահարույց իրավիճակ՝ ուսուցչուհին հասավ իր նպատակին. աշակերտները գուշակեցին դասի ընթացքը: Դասի գազաթանկետը եղան Ամունդսենի և Սքոթի արշավախմբերի՝ դեպի Հարավային բևեռ կատարած ճանապարհորդությունների մասին պատմող տեսասահիկները: Եվ նորից մեկը մյուսին շարունակելով ու լրացնելով, ըստ տեսասահիկի, խոսում էին աշակերտները:

Կշռադատման փուլում դասարանը կրկին բաժանվեց 5 նույն խմբերի՝ խճանկարի միջոցով պատկերելու Անտարկտիդան: Շուտ վերջացնող թիմը գրատախտակին պատկերեց Անտարկտիդայի մեծադիր խճանկարը: Հաջորդը զույգերով աշխատանքն էր: Առաջին խումբն ասում էր դասանյութի վերաբերյալ նախադասության սկիզբը, երկրորդ խումբն ամբողջացնում էր այն.

- Անտարկտիդան հայտնագործել է Բելինս-հաուզենի և Լագարկի գլխավորած արշավախումբը՝ 1819-1921թթ. կատարած շուրջերկրյա նավարկության արդյունքում:

- Հարավային բևեռ առաջինը հասավ նորվեգացի Ռուալ Ամունդսենի գլխավորած արշավախումբը՝ 1911 թվականի դեկտեմբերի 14-ին:

- Անգլիացի բևեռախոյզ Ռոբերտ Սքոթը, իր չորս ընկերների հետ 1912 թվականի հունվարի 17-ին հասնելով Հարավային բևեռ, խորը հիասթափություն ապրեց՝ տեսնելով նորվեգական դրոշն ու Ամունդսենի ձեռն տնակը:

- Արշավախումբը դաժան վախճան ունեցավ. փրկարարները ութ ամիս հետո գտան Սքոթի և ընկերների վրանը և նրանց սառած մարմինները:

Հուզիչ, խորհրդանշական ու արդիական էր դասի վերջաբանը: Ուսուցչուհին, սահուն անցում կատարելով, դասը կապեց Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի և նրա խորհրդանշիչը հանդիսացող «Ամնոռուկ» ծաղկի հետ: Տարբեր լեզուներով այս ծաղկի անվանման իմաստը նույնն է՝ «Հիշիր»: Աշակերտներին հիշեցրեց, թե ինչ մայր ցամաքներ են իրենք ուսումնասիրել, և դրանք քանիսն են:

«Ամնոռուկ» ծաղկի 5 թերթիկները խորհրդանշում են 5 մայր ցամաքները, որտեղ ապաստան են գտել Ցեղասպանությունից փրկված հայերը: Աշակերտները տվեցին նաև ծաղկի գույների բացատրությունը. սևը մարմնավորում է անցյալը, բաց մանուշակագույնը՝ ներկան, մանուշակագույնը՝ ապագան, դեղինը՝ հավերժությունը: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը խորհրդանշող, շրջանաձև դասավորված 12 մույթերի տեսքով, իսկ կարգախոսը՝ «Մենք պահանջատեր ենք՝»

ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՊԱՐԱՆՁՈՒՄ:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ

ՊԱՍԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿ

Սովորողների մոտ համապատասխան հմտությունների, գիտելիքների, ունակությունների ձևավորում, շարժողական նախապատրաստության անհրաժեշտ մակարդակի ձեռքբերում...

Մանկավարժական հնարամտությունը գործի հաջողության գրավականներից մեկն է, ահա թե ինչու ֆիզկուլտուրայի ուսուցչից մշտապես պահանջվում է գործին մոտենալ ստեղծագործաբար...

պես կանոն, դասի հիմնական մասի սկզբում, իսկ ուժային և դիմացկունության զարգացման վարժությունները՝ վերջում:

Ֆիզկուլտուրայի դասին մերժել տեսությունը՝ նշանակում է առարկան վարել սխալ մեթոդով: Ուսուցիչը սովորողների մեջ պետք է ձևավորի ստացած գիտելիքները գործնականում օգտագործելու հմտություն: Ֆիզկուլտուրայի կուլտուրայի գիտելիքներն օգնում են սովորողներին բարձրացնել իրենց կրթվածությունը, ունակություններն ու հմտություններն արդյունավետ օգտագործել առողջության ամրապնդման, ֆիզիկական հատկությունների զարգացման, աշխատանքի և հայրենիքի պաշտպանությանը նախապատրաստվելու համար:

Տարիների փորձը, ինչ խոսք, շատ կարևոր է: Ուսուցիչն իր երկարամյա գործունեության ընթացքում, անընդհատ կրկնելով ծրագրային նյութը, հասնում է կատարելագործման մի այնպիսի աստիճանի, որ հաճախ դասին նախապատրաստվելու հարցն ասես կորցնում է իր էականությունը: Տեղերում մեծ մասամբ մտածում են, թե ինչ նախապատրաստության մասին կարող է խոսք լինել, երբ այդ նույն թեման իր տեսակով ու գործնական հարցերով դասավանդում են տարիներ շարունակ, ինչ կարող են ավելացնել, ասենք, շարադրանք պատրաստակալության պահանջներին, աջ դարձը մնում է այդ դարձ: Այսպիսի տրամաբանության եզրահանգում է մեր համար, որ հաճախ դասի նոր պլան կազմելու փոխարեն օգտագործվում են հինգը մի փոքր «չտկունով», փոխելով տարեթիվը: Այսպիսի եզրահանգումները ճահճացման նշաններ են և ապացույցներ, որ մարդը կամ պատահականորեն է ոտք դրել մանկավարժության բնագավառ, կամ սպառել է հետաքրքրությունն իր առարկայի նկատմամբ:

Դասի առաջին մասը: Ես իմ երկարամյա մանկավարժական փորձից և դիտումներից համոզվել եմ, որ գործին մեծ վնաս են բերում ձևամոլությունը, նույնի պատճենահանումը, ծանծաղույթ առաջացող և ավելորդ կրկնողությունը: Պետք է աշխատել որքան հնարավոր է, դասի նյութը մատուցել նոր, ավելի արդյունավետ եղանակով, իհարկե, միաժամանակ հարազատ մնալով ուսումնական ծրագրից բխող նպատակադրմանը: Դասի ժամանակ դարձյալ ցանկանում եմ ուսումնական գործունեության կազմակերպումը պետք է լինի առավելագույն չափով պարզ, հստակ և գրավիչ:

Որպես օրինակ վերցնենք դասի առաջին մասում տրվող շարային վարժությունները: Շատ հաճախ ֆիզիկական կուլտուրայի որոշ մասնագետներ այն կարծիքն են հայտնում, թե շարային վարժությունները երեխաներին չեն հուզում, նրանք ծանձրանում են նույն շարքից ու գործունեությունից, ուշադիր չեն, և նրանցում օգտակար շատ քիչ բան են տեսնում: Այդ, այսպես ասում են ու մոռանում, որ դա սկսվում է ուսուցչի դասավանդման մեթոդից, որ հաճախ, դժբախտաբար, տարտուկ է, միապաղաղ, անհետաքրքիր: Եթե ուսուցիչն ուսումնական տարվա բոլոր դասաժամերն սկսի մեկ շարք կազմելով, պահանջի մի շարք աջ և ձախ դարձումներ և այնուհետև անցնի քայլերին ու վազքին, իհարկե, դասը կդառնա անհետաքրքիր ու ծանձրալի: Աշակերտներին իրենք արդեն կհիմնան, թե ուսուցիչն ամեն օր որ հրահանգով ինչ է պահանջելու, և իրենք ինչ են անելու: Դասաշարում ամեն դասի ցանկալի է սկսել մի նոր տարբերակով միաշար, երկշար, եռաշար, միասյուն, երկսյուն, եռասյուն, շրջանաձև (դեմքով դեպի շրջանի կենտրոնը կամ դուրս) և այլն: Դարձումների սովորական եղանակները լրացնել ցատկերով, շարաընթացքում պահանջել վերաշարումներ: Շարային քայլերը լրացնել ձևավոր քայլերով, պարային տարրերով, ուշադրության երանգներով, հանդիսավոր և ազատ քայլերով:

Դասի առաջին մասում աշակերտների ֆիզիկական ծանրաբեռնվածության չափավորումը միշտ պետք է գտնվի ուսուցչի ուշադրության կենտրոնում: Երկարամյա դիտումները վկայում են, որ հանրապետության հանրակրթական դպրոցներում քիչ չեն ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, ովքեր անստուն են այս խիստ կարևոր հարցը: Արանք դասի սկզբից տալիս են մեծ ծանրաբեռնվածություն, որի հետևանքով հիմնական մասում երեխաների կարողություններն սպառվում են, և դասը ձախողվում է: Լինում է և հակառակը, դասի առաջին մասը վերածվում է պարասպորտային, ժամավաճառի կամ ավելորդ խոսակցության, հետո անմիջապես սկսվում է դասի ծանրաբեռնվածության հիմնական մասը՝ ի վնաս երեխաների ֆիզիկական դաստիարակության: Սխալ է միայն այս հարցում է, որ ֆիզկուլտուրայի ուսուցիչը պետք է կարողանա ցուցաբերել իր հմտությունը: Նա յուրաքանչյուր դասի պարտավոր է նախապատրաստվել վաղօրոք, կայել ու չափել իր անելիքները, մտովի լուծել այն բոլոր խնդիրները, որոնք պետք է կատարի հաջորդ օրը:

Դասի հիմնական մասը: Դասի այս մասում լուծվում են ֆիզիկական դաստիարակության հիմնական խնդիրները՝ սովորողների համար կենսականորեն անհրաժեշտ շարժողական հատկությունների և ունակությունների զարգացում (արագություն, ուժ, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն): Դենց դրա համար պարասպորտային այս մասում հատուկ նշանակություն է ստանում ֆիզիկական ծանրաբեռնվածության բաշխման և նրա փոփոխությունների նկատմամբ բժշկամանկավարժական պահանջների պահպանումը: Ուսուցչան գործընթացում հետևել վարժությունների չափաբանակի համապատասխանությանը՝ նրանք տևողությունը, կրկնությունը, հանգստի հերթազարկությունը, բարդության աստիճանականությունը: Դրա համար պետք է լավ կշռադատել դասի կազմակերպումը նախապատրաստել սարքավորումները, գույքը, ուսուցչան տեղերը: Ընտրել համապատասխան կազմակերպական-մեթոդական ձև, առանձին աշակերտներին տալ լրացուցիչ հանձնարարություններ՝ ելնելով նրանց ֆիզիկական պատրաստակալության աստիճանից: Դրա հետ միասին չպետք է մոռանալ վարժությունների ձևերի յուրացման մեթոդական, հաջողակալությունը: Օրինակ՝ շարժումների ճշգրտության, բարդ կողմնորոշումների, ճարպկության և արագության դրսևորման հետ կապված վարժությունները պետք է յուրացնել, որ-

Շնորհավորանք ՄԻՇՏ ՃԻՇՏ ՌԻ ԱՐԴԱՐ



Մարդկային կյանքը չափվում է ոչ թե անցած ( ա պ ր ա ծ ) տ ա ր և ը ր ի ք ա ն ա կ ո վ , այլ կատարած գործերով: Գործեր, որ մկիրումի, ճիշտ ապրելու, երկիրը շեն պահելու դասեր են: Եվ

Երբ հետ են ճայում ու տեսնում, որ ինչ-որ բան են արել քո ժողովրդի համար (շատ թե քիչ՝ կարևոր չէ), հոգիդ խաղաղվում է, ու հանգիստ շունչ ես քաշում այն մտքից, որ ինքը էլ ունես քո ներդրումը ժողովրդի կյանքում: Այս կենսափիլիսոփայության մասին ասելիք իր 65 տարիները խնամալստի Արթուր Չայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Զավեն Բեգլարյանը, որը 65-ից 35-ը հենց այս պաշտոնում է անցկացրել:

1967-ին ընդունվել է Երևանի պետական-սարանի ֆիզիկայի ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը: Սեկ տարի սովորելուց հետո գորակազմվել է խորհրդային բանակ: Քանի որ կյանքը շուրջ ու բարեհաճ չէր նրա հանդեպ (մայրը մահացել էր, հայրն էլ ծեր էր), մեկ տարի ծառայությունից հետո գորակցում են, և նա տեղափոխվում է Ստեփանակերտի ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը, որն ավարտում է 1974-ին՝ գերազանց գնահատականներով: Այնուհետև է Ստեփանակերտի երեկոյան դպրոցում՝ որպես կոնսուլտանտի վարիչ, այնուհետև՝ Բալուջայի (այժմ՝ Այգեստան) ու Քոստանու միջնակարգ դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Այդ ժամանակահատվածում կնոջ հետ ապրել է Ստեփանակերտում: Ապրել է՝ միշտ դժվարությամբ վաստակելով կենսական միջոցները:

Չայրենի հողի կանգնվել 1976-ին տեղափոխվում է հարազատ գյուղ՝ Սնապատ և նշանակվում դպրոցի ուսմամբար (տնօրենն այդ ժամանակ երջանակահիշատակ Գալյա Բաբայանն էր): Անցնելով Գ. Բաբայանի «դպրոցը»՝ չէր կարող նրա արժանի հետնորդ չդառնալ:

1980-ի օգոստոսին (Գ. Բաբայանի վաղաժամ մահից հետո) Զ. Բեգլարյանը նշանակվում է դպրոցի տնօրեն և առայսօր արժանապատվորեն շարունակում է ու զարգացնում լավագույն ավանդույթները՝ միշտ բարձր պահելով դպրոցի ու գյուղի պատիվը:

Արցախյան պատերազմի ամենածանր օրերին անգամ, երբ դեռ ոչ մի դպրոց չէր գործում, գյուղի գրասենյակում վերսկսել է պարասպորտային (դպրոցի շենքը ռմբակոծության և հրետակոծության հետևանքով քանդվել էր)՝ շատ լավ հասկանալով, որ դպրոցի գոյությունը միաժամանակ երկու հեռահար նպատակ կհետապնդի: Առաջին՝ դիրքապահներն ամուր կպաշտպանեն սահմանը, քանի որ գյուղում իրենց ընտանիքներն են ու երեխաները: Երկրորդ՝ խնամալստի կորուստը ճակատագրական կլինի Դարաբաղի համար:

Նա հեռատեսն ու հետամուտ ղեկավար է, որ 35 տարի շարունակ ղեկավարում է դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, բազմաթիվ սերունդներ է ուղեկցել դեպի կյանք ու միայն հաջողություններ արձանագրել:

Խստապահանջ լինելով իր իսկ անձի հանդեպ՝ պահաջկոտ է նաև բոլորի նկատմամբ:

Ապրեք միշտ ճիշտ ու արդար, երբեք չսայթաքեք, չզայթակրվեք փառքի փուչ ու սին պատրանքներով և մնաց հավետ մարդկայնության այն բարձունքին, որին շատերը կերպագրել են հասնել:

Այսօր 65 տարեկան էք և շարունակում եք ղեկավարել դպրոցը, հարգարժան գործընկեր և տնօրեն:

Ձեզ և 65 ենք ցանկանում՝ անկախ նրանից՝ դպրոցում կլինեք, թե դպրոցից դուրս:

Թող Ձեր հետագա տարիներն անցնեն խաղաղ ու հանգիստ առօրյայով, խաղաղ երկրի ու խաղաղ հարկի տակ՝ միշտ հարազատներով շրջապատված:


Եղե՛ք երջանիկ և ապրե՛ք երկար:

Խնամալստի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Շավարշ ԳՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴ

ՆԱ ԻՍԿԱԿԱՆ ՈՒՄՈՒՑԻՉ ԷՐ, ԱՆՁՆԿԵՐ ՄԱՐՏԻԿ



Յայրենի քաղաքում ծնված և ապա Երևանում ապրող հայտնի լրագրող և լրատվամատեր Վահագն Գալստյանը...

Անվտանգության հարցեր, հիբրիդ, մարտական փառավոր ուղի է անցել: Ձեռքը ձեռքին մասնակցել է ԵՖԵՄ-Ռազալու խուճապաշտպանական գծում տեղի ունեցած բռնարար մարտերին՝ Ղազարի, Յաղավենդի, Ֆիզուլի, Ժղանուկի, Զորադիզի, Արամի տափաստանի, Աղզամի, Մարտակերտի ազատագրման համար մղված թե՛ կռիվներին՝ իր անօրինակ քաջագործություններով ոգևորելով զինակից ընկերներին, շատերին:

Վերջին մարտը մղել է Սեյսուկանի մոտ՝ Դիլիջիլար գյուղի համար: Պատմում են, որ նա այստեղ ծանր վիրավորվել էր ծախքից, ու թեև արյունը շիթ-շիթ ծորում էր վերքից, թեև ընկերները հորդորում-համոզում էին դուրս գալ կռվի դաշտից, նա էլի շարունակում էր մնալ առաջին գծում, չէր ուզում զենքը ցած դնել: Վաշտի զինվորները, ցուցաբերելով կամքի անասելի ուժ ու մեծ անձնագիտություն, կրակի տարափի տակ քայլ առ քայլ առաջ էին շարժվում: Բոլորը՝ Վլադիկը, Կարոն, Արտեմը, Ղալիթը, մյուսներն ասես առյուծացել և մի շունչ ու մի մարմին դարձած՝ նորից ու նորից գրոհում, ջանում էին ժամ առաջ հետ շարտել դիրքերին մոտեցող ազերիներին: Գալստյանը, որ վաշտի հրամանատարի տեղակալն էր, տեսնում էր այս ամենը ու մոռացած վիրավոր բազկի սաստկացող ցավը՝ գոչում, բացականչում էր՝ առաջ, տղաներ... Եվ ահա ուր որ է թշնամին պիտի նահանջեր, ուր որ է մերոնք պիտի հասնեին առջևում փռված թիուտներին, ահա հաղթանակը ցնծություն պիտի պատճառեր մեր մարտիկներին, բայց հանկարծ...

Զգիտես որտեղից թուրք մշանառուի արծակած գնդակը կպավ Գալստյանին, ու նա արնաշաղախ ընկավ գետնին: Թավիշ կանաչը մեկնեց կարմիր հագավ գլխից ծորացող արյունից: Մարտակերտի հողը հայրենասեր մարտիկի վերջին խիզախության վկան է: Դա 1994-ի ապրիլի 26-ին էր՝ Մայիսյան տոների նախաշեմին:

Յերեսի դին հողին հանձնեցին հայրենի գյուղում՝ Յայրենական մեծ պատերազմում զոհված շեխերգիների հիշատակն անմահացնող հուշարձան-կոթողի հարևանությամբ:

Այսօր, երբ ավելի քան երկու տասնամյակ է անցել մեր հողին ու ջրին, Արցախ աշխարհին այնքան մոտեցած ազատամարտիկի՝ Գալստյանի մահից, նրա գերեզմանը դարձել է մի յուրահատուկ սրբատեղի, մի յուրահատուկ ուխտատեղի:

Գ. Միրզայանը ծնվել է 1949-ի հունիսի

սի 11-ին: Տեղի ութամյան ավարտելուց հետո ուսումը շարունակել է հարևան Մեծ Թաղերի մարշալ Արմենակ Խան-փերյանցի (հուղյակովի) անվան դպրոցում, ուր աչքի է ընկել իր ուշիմությամբ ու պարտաճանաչությամբ: Ապա ուսման ծարավը նրան տարել է Բաքու, որտեղ սովորել է Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետում: 1972թ. սեպտեմբերի 1-ին, ուսուցչի դիպլոմը ձեռքին, առաջին անգամ մտել է դասարան: Ֆիզիկա էր դասավանդում: Այն էլ ինչպե՞ս... Երիտասարդին հատուկ ոգևորություն, մկրտվածություն, մասնագիտական խոր գիտելիքներ: Հատկանշիչներ, որոնցով օժտված էր նոր մշակակված ուսուցիչը՝ համեստ ու շիտակ Գալստյանը, որն արդեն սիրված անուն էր հարազատ կրթօջախում: Նշենք, որ մինչ այդ՝ մանկավարժի կարգավիճակով դպրոց մտնելը, ծառայել էր խորհրդային բանակում, որտեղ փայլել էր գերազանց կարգապահությամբ ու ռազմական տեխնիկային տիրապետելու ունակությամբ: Ապացույց՝ մեկ տասնյակի հասնող զովասանագրերն ու պատվոգրերը:

Անթիվ ծրագրեր, երազանքներ ուներ: Ու ամենամեծ երազանքը մեկն էր՝ իր հինգ զավակներին կյանքում իրենց տեղը գտած տեսնելը: Այո, բազում պայծառ երազներ ուներ, բայց Արցախյան շարժման առաջին իսկ օրերին մոռացավ ամեն ինչ ու դարձավ երկրպագի նորաստեղծ ջոկատի ամենակատիվ անդամներից մեկը: Մի խոսքով՝ տակավին 1988-ին նա ունկնդրել է Արցախի խռովակառույց կանչը և առանց պահ անգամ վարանելու ոտքի ելել, կանգնել քաջերի, աներերների կողքին: Կինը՝ Լաուրան, անթաքույց հպարտությամբ է պատմում նրա հետ կապված առանձին դեպքեր ու անցքեր: Հիշում է նրա՝ 1992-ի հունիսի 26-ի անասնաման ոգևորությունն ու ուրախությունը:

«Այդ օրն ուշ երեկոյան մի երկու ժամով տուն էր եկել ու բարձր տրամադրությամբ խոսում էր թուրքին հասցրած առաջին հարվածի, առաջին մարտի մասին: Ազերիները, որ ներխուժել, հասել էին Կարմիր Շուկա, փակել էին Ստեփանակերտ, Մարտունի, Հաղարթ տանող ճանապարհը և հոխորտում-սպառնում էին կանանց ու երեխաներին: Եվ ի՞նչ... Տեսնելով մեր տղաների տոկունությունն ու հնարամտությունը, զգալով նրանց գորեղությունը, անընկճելիությունը՝ ստիպված էին թողնել գրաված տարածքը: Այդ կռվում Գալստյանը թմրանոթի կրակի տակ գերեզման էր թշնամու մեկ ՅՄՄ, առգրավել, յուրայիններին բաժանել յոթ ավտոմատ, շարքից հանել, ոչնչացրել թուրքի երկրորդ ՅՄՄ-2-ի մեխանիկ-վարորդին: Սա նոր ուժ ու շունչ էր տվել մեր ազատամարտիկներին, ինչ խոսք, նաև իրեն՝ Գալստյանին»:

Ի դեպ, վերջինս Ղազարի դեմ առաջին անգամ կրակ էր բացել իր իսկ պատրաստած «Գրադ» կայանից, որը հիմա էլ դրված է Ձոհված ազատամարտիկների հուշաթանգարանի մուտքի դիմաց: Նայում են ինքնաշեն զենքի այդ եզակի մոնոլիթն ու զարմանում, խորհում, մտորում և ակամայից շշջում. «Իսկապես, մեծ խելքի, պրպտող մտքի տեր է եղել Գալստյանը և, ըստ երևույթին, ֆիզիկայի

դասագրքում շարադրված օրենքներից բացի, բավականին լավ էր հասկանում տեխնիկայի լեզուն:

Գալստյանի մասին կարելի է շատ բան ասել: Թե նա ինչ էր է արել Ղազարի, Յաղավենդի, Ղարամանուղու գրավման ժամանակ, հայտնի է միայն ակամատեսներին ու մեկ էլ՝ Աստծուն: Մի զարմանալի ու հաճելի երևույթ է: Պատերազմական գործողությունների ողջ ընթացքում նրա ղեկավարած վաշտը գրեթե բոլոր մարտերից դուրս է եկել առանց զոհերի կամ տվել աննշան զոհեր: Մի՞թե այս հանգամանքը չի խոսում զինվորի նկատմամբ ունեցած մեծ հոգատարության, իր ձեռքի տակ եղած զինուժի գրագետ ղեկավարման մասին: Այո, Գալստյանը գիտեր ըստ արժանվույն գնահատել ու հոգալ հայրենի հողի թիվ 1 պաշտպանի՝ շարքային զինվորի մասին, ու նա, որ իրեն ոչ ոքից չէր զանազանում և իր առաջնահերթ պարտքն ու պարտականությունը համարում էր հարազատ գյուղի ու երկրամասի պաշտպանությունը, ողջ իմաստալից կյանքը մկրտաբերեց ազգին ու հայրենիքին: Չկա այսօր Գալստյանը, բայց չկա լույս ֆիզիկապես: Նա ապրում ու շնչում է իր շեն ու խաղաղ օջախում, իր համագյուղացիների, նախկին մարտական ընկերների, խելոք ու բանիմաց իր հինգ զավակների (Աշոտ, Սերգեյ, Մարիետա, Ժուլիետա, Մարգարիտա) հիշողություններում ու հայրենամեծ գործերում և ութ թռուցիկ՝ մայրենից, պատմությունից, մյուս առարկաներից ստացած բարձր միջերում, աշխույժ խաղերում, քաղցրիկ ժպիտներում:

Հարկ են համարում շեշտել, որ բոլոր հինգ զավակներն էլ իրենց ընտանիքներն ունեն, հայկական ավանդույթներն ու սովորույթները պաշտող իրենց օջախները: Ասել կուզի՝ իրականացել է անձնվեր մարտիկի ամենամեծ իղձն ու երազանքը: Ի դեպ, Աշոտը՝ ավագը, ծառայում է Հայոց բանակում, իսկ ամենից փոքրը՝ Մարգարիտան, իր կենսագրությունն է հյուսում թավուտ անտառների ու բլուրների գոգում ծվարած հայրենի գյուղի՝ ԵՖԵՄի հիմնական դպրոցում: Ու երբ մեկ-մեկ խոսք է բացվում ուսուցչի, կրթօջախի առջև դրված դժվարին, բայց պատվաբեր խնդիրների մասին, մի տեսակ թախծոտ տոնով ասում է. «Երանի՜ հայրիկս կենդանի լինե՞ր...»:

Հիշեցնենք, որ նորակառույց դպրոցը կրում է ֆրանսահայ բարերարներ Նիկոլոս ու Յերմինե ամուսինների անունը:


Չմոռանանք ասել և այն, որ երկրորդ հարկում ճաշակով ձևավորված Փառքի սրահը ինքնին շատ բան է հուշում անձնուրաց ազատամարտիկների, առավել ևս՝ Գալստյանի մասին: Այստեղ փակցված են զոհվածների լուսանկարները: Իսկ կենտրոնում, բնական է, Գալստյան է, որի խոհուն ու պայծառ հայացքը բոլորին, նոր-նոր Մերոպյան գրերը սերտողին ու տարեվերջյան քննություններին պատրաստվող պարմանուհուն հուշում, պատմում են:

- Ուր էլ գնաք, ուր էլ լինեք, երբեք չմոռանաք, որ հայրենի հողի կանչը և դպրոցական զանգի անուշ դողանքը թանկ ու սիրելի են ամեն-ամեն ինչից:

Միքայել ԲԱԼՅԱՆ  
Թոշակառու ուսուցիչ

Խոսք հիշատակի

ՄԻԱՆՊԱՄԻՉ, ԱՆԿԱՐՇԱԿԻ...



Մարտի 24-ի լույս 25-ի գիշերն այդպես էլ չլուսացավ, մթագնեց ու խավար դարձավ Վարազդատ Գևորգյանի համար:

Նա աշխարհից հեռացավ՝ ծաղկած գարունն իր սրտում, բյուր երազներն իր հոգում...

Այդ ահավոր բոթը վրդովեց ամենքին ու ամենի հոգին. կյանքից հանկարծակի հեռացավ վաստակաշատ մանկավարժ, իր գործին ու աշխատանքին անձնացող մկրտյալ, ընտանիքի կատարյալ հայր ու ամուսին, ժամանակի անվեհեր մարտիկ, պարզապես լավագույն գործընկեր Վարազդատ Գևորգյանը:

Ողբում էինք բոլորս՝ ընկեր թե աշակերտ, չէինք կարողանում համակերպվել Վ. Գևորգյանի բացակայությանը մեր դպրոցում: Չէ՞ որ նա իր կյանքի 25 տարիները մկրտել է այդ դպրոցի շենացման գործին: Չէ՞ որ այդ տարիների ամեն Աստծո առավոտ իրար բարի լույս ենք հղել, իրար հետ ուրախացել ու տխրել, իրար կյանքով լիացել ու ապրել:

Վարազդատ Հրանտի Գևորգյանը ծնվել է 1956թ. հունիսի 14-ին, ԼՂ Մարտունու շրջանի Սոս գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: 1971-1972 ուստարում ավարտել է Սոսի միջնակարգ դպրոցը: 1972թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և 1976-ին ավարտել: 1976թ. օգոստոսի 10-ին աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի պրոֆտեխտունմանարանում: 1977թ. մայիսից մինչև 1978թ. դեկտեմբերը ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1978-ի դեկտեմբերից մինչև 1979թ. փետրվարն աշխատել է Ստեփանակերտի հ. 21 պրոֆտեխտունմանարանում, 1979-ի մարտից մինչև 1988թ. դեկտեմբերը՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնում:

1989թ. փետրվարից մինչև 1989-ի օգոստոսն աշխատել է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցում: 1989-ից աշխատանքի է անցել Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1993թ. փետրվարից ծառայել է ԼՂԿ պաշտպանության բանակի շարքերում: 1998-ից նորից վերադարձել է հարազատ դպրոց՝ շարունակելու ուսուցչի վեհ ու մկրտական գործը: 25 տարի շարունակ դպրոցը՝ հարազատ օջախ, երկրորդ տուն է եղել Վ. Գևորգյանի համար: Երկար ու ծիգ տարիներ նա մտել է դասարան ու իր հոգու զանձերը սերմանել սաներին: Նրա աշխատանքային ուղին լի էր մկրտումի ու պատասխանատվության զգացումով:

Նա իր կյանքի վառ տարիները, իր ողջ ուժն ու կորովն անձնացողը մկրտել է դպրոցին ու աշակերտությանը:

Հպարտանալու շատ բան ուներ Վ. Գևորգյանը: Նրա դասավանդած աշակերտներից շատերն օլիմպիադայի քաղաքային և հանրապետական փուլերում զբաղեցրել են առաջնակարգ տեղեր: Բազմիցս պարզաևարվել է պատվոգրերով, զովասանագրերով ու դիպլոմներով, իսկ դպրոցի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ՝ ԼՂԿ վարչապետի հուշամեդալով:

Վ. Գևորգյանն օժտված էր բարձր գիտակցական կարգապահությամբ, պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով: Կատակասեր էր, սրամիտ, սիրում էր մեծ բանաստեղծներից դիպուկ մեջբերումներ անել ու վերլուծել յուրովի: Բայց, ավաղ, ընդհատվեց այդ ամենը մի վայրկյանում. նա գնաց, գնաց անդարձ, անդառնալի. ասես ուխտել էր կատարել իր սիրած բանաստեղծի պատգամը՝

Եթե մեռնե՛լ...  
Միանգամից, մի վայրկյանում, հանկարծակի...  
Մեր հարգելի գործընկեր, մեր հարազատ ընկեր, քո հիշատակը հավերժ վառ կմնա մեր հուշերում: Ձեր անունը հավետ կապրի, քանի ապրում են Ձեր սաները, Ձեզ ճանաչողները...

ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի մանկավարժական կոլեկտիվ

ԳԻՍՈՐԴ - 2015

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » մարտի 2015 թ.

N 185-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ԼՐԻՎ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌՆԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան` Լեռնային Դարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ`**

1. Հաստատել Լեռնային Դարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության` ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը` համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Լեռնային Դարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում են Լեռնային Դարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները` համաձայնեցնելով Լեռնային Դարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:

3. Լեռնային Դարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Դարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N 81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Լեռնային Դարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Լեռնային Դարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) 10 տոկոսը (ամսվազմ մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զրոյացված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Դարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՋԱՊԵՏ` Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Լեռնային Դարաբաղի Հանրապետության  
կառավարության  
2015 թվականի մարտի 30-ի  
N 185-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՋԻ ԼՐԻՎ ՓՈՒՆՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՋԱՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌՆԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1.ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

1.1 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 4 columns: Ց ա ժ Վ ա գ ի ռ ը, Մասնագիտության անվանումը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը

1.2 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌՆԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 3 columns: Ց ա ժ Վ ա գ ի ռ ը, Մասնագիտության անվանումը, Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը

Table with 3 columns: Ց ա ժ Վ ա գ ի ռ ը, Մասնագիտության անվանումը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2.1 ԲԱՎԱՍԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 4 columns: Ց ա ժ Վ ա գ ի ռ ը, Մասնագիտության անվանումը, Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը, Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը





ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

Table with 5 columns: ID, Code, Name, Value 1, Value 2, Value 3. Rows include codes like 080200, 080300, 081500, 140200, 190200, 270100, 26 and a total row.

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԱՄԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Table with 5 columns: N, Name, Value 1, Value 2, Value 3. Rows include codes like 190300, 310102, 310302, 311101, 311103 and a total row.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԱԴՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » մարտի 2015 թ.

N 188-Ն

Ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՇԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:

3. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումը իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 188-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՊԱՍՏԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՇԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ԶԱՄԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՈՒՅՁ

Table with 5 columns: ID, Name, Value 1, Value 2, Value 3, Value 4. Rows include codes like 0402, 0405, 0406, 0418 and a total row.

2. ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԶՈՒՅՁ

Table with 4 columns: ID, Name, Value 1, Value 2. Rows include codes like 0501, 0502, 0503, 0504, 0505 and a total row.

3. ՇՈՒԾԻ ԱՐՄԵՆ ԽԱՁԱՏՐՅԱՆ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԶՈՒՅՁ 3.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ

Table with 4 columns: ID, Name, Value 1, Value 2. Rows include codes like 0514, 0515, 0518, 2014, 2307 and a total row.

3. 2. ՇԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՈՒՄ

Table with 3 columns: ID, Name, Value. Rows include codes like 0517, 0601 and a total row.

ԴԻՍՈՐԴ - 2015

4. ՄՏԲՈՒՆՈՒ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԱՐԱՆ

Table with 3 columns: Ցածկորդ, Մասնագիտության անվանումը, Անվճար ուսուցման տեղերը

5. ՄՏԲՈՒՆՈՒ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԱՐԱՆ

Table with 4 columns: Ցածկորդ, Մասնագիտության անվանումը, Անվճար տեղերը (Իրմնական կրթությամբ), Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ)

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԱՐԱՆ

Table with 4 columns: Ցածկորդ, Մասնագիտության անվանումը, Անվճար տեղերը (Իրմնական կրթությամբ), Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ)

7. ԶՈՒՅԻ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՄՈՒԹՈՒՄ)

Table with 3 columns: Ցածկորդ, Մասնագիտության անվանումը, Անվճար տեղերը (Իրմնական կրթությամբ)

ԼԵՆԱՅԻՆ ԴԱՐԱՐԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՍՏԱՍԿԱԶՄԻ ԴԵԿԱՆՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ֆիշում են և պահանջում....

ՈԳԵԿՈՉԵԼՈՎ, ԴԱՆԱՆՋԵԼՈՎ, ԴԱՅՔԱՐԵԼՈՎ ...

Պատերազմը միջոց է, որն օգտագործում են մարդասպանները՝ իրենց արածներն արդարացնելու համար: Ավելի քան 100 տարի է անցել, բայց «մոռացված պատերազմից» հուշերը կենդանի են համա-մարդկային հիշողության մեջ և հիշեցնում են 20-րդ դարի Հայոց ցեղասպանությունը:



2015 թվականը խորհրդանշական է ու

Ցավոք, պատմության ամենամութ հատվածներից մեկը մոռացվել է շատերի կողմից, հատկապես նրանց, ովքեր մեծ ներգրավվածություն են ունեցել Օսմանյան կայսրությունում 1914թ. հոկտեմբերից սկսած և մինչև 1923 թվականը տեղի ունեցած իրադարձությունների մեջ: Հարյուր տարի է մեզ բաժանում այդ դեպքերից, որոնք շատերը համենատուն են երկրորդ աշխարհամարտի ժամանակ իրենց նկատմամբ իրականացված Յոլոթոստի հետ: Մեծ թվով պետության ստեղծմանը խանգարում էր Հայաստանը: Հայաստանը մաքրել հայերից. այս դարձրին լուծման ճանապարհ:

տարաբնույթ միջոցառումներով հագեցած, որին ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի աշակերտական կոլեկտիվը: Դպրոցում կահավորված են միջանցքները, ձևավորվել են «Սպիտակ եղեռն», «Մեր մշտահունչ ու մշտաթուն Անլուելի զանգակատուն», «Ֆիշում են և պահանջում», «Ճանաչում, դատապարտում, հատուցում» խորագրերով անկյուններ, վահանակներ, պաստառներ, որոնք միտված են ազգային հարցի շուրջ համախմբվածություն ստեղծելու, արթուն պահելու ազգային հիշողությունը, պահանջատիրությունը:

Եվ եթե թուրքիայի կառավարությունը շարունակաբար ժխտում է Հայոց ցեղասպանությունը, այնուամենայնիվ, ավելի քան 22 երկրներ և ԱՄՆ գրեթե բոլոր նահանգները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը՝ որպես պատմական իրողություն, որը պետք է հիշել և հաշվի առնել, որ նման իրադարձություններն այլևս չկրկնվեն: Այս ամենին քաջատեսակ է մեր ազգի յուրաքանչյուր ներկայացուցիչ:

Այսօր նոր սերունդ է աճում, որն անդրադարձ կատարելով Հայոց ցեղասպանությանը և դրա ճանաչման խնդրին, նպատակ ունի ցեղասպանության երևույթի նկատմամբ ձևավորել բարոյական վերաբերմունքի և ակտիվ քաղաքացիական դիրքորոշում:

Միջոցառումներին յուրովի շունչ հաղորդեց պատմության ուսուցչուհի Լաիրա Թորոսյանի կողմից հրավիրված 98-ամյա համուն մայրիկի ներկայությունը: Նա իր խոսքում նշեց, որ ծնողները 1915 թվականին Ուրֆայից եղեռնապուրծ հասել են Լիբանան: Ճակատագրի բերումով նրանք տեղափոխվել են Սիրիա և Քեսաբի դեպքերի հետ կապված՝ ընտանիքով բնակություն հաստատել Արցախում՝ կյանքի վերջին տարիները հայրենիքում անցկացնելու հույսով: Խանուն մայրիկի խոսքը ոգեկոչող էր: Նա աշակերտներին բարեմաղթանքներ հղեց և խնդրեց, որ թեկուզ 1000 տարի անցնի, հիշեն և դատապարտեն ցեղասպանությունը ու պահանջատեր լինեն



մեր պապենական հողերին: Դպրոցականներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՊԲ ՀԲ շեֆ գործառնատուն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հուշարձան-խաչքարի բացման և օծման արարողությանը: Նրանք գինվորների հետ միասին ծաղիկներ խոնարհեցին ու խնկարկեցին եղեռնի անմեղ զոհերի անմեղ հո-

գինների համար: Արարողությունը ոգեկոչող էր, արդարամիտ:

Մեր աշակերտները կմասնակցեն նաև ԼԴՀ դպրոցների միջև անցկացվող «Ազգային պար» մրցույթ-օլիմպիադային, ՀՀ ԿԳՆ գեղագիտության ազգային կենտրոնի կողմից անցկացվող պատմառի և պատի թերթի ձևավորման մրցույթ-փառատոնին, ստեղծագործական շարադրությունների մրցույթին, համադպրոցական աշակերտական համաժողովին, պատմամշակութային և գրական-գեղարվեստական միջոցառումների ու երթերի:

Դպրոցի աշակերտական խորհուրդը հանդես եկավ նաև հետաքրքիր նախաձեռնությամբ: Առաջարկվեց աշակերտների կողմից կազմակերպել հանգստավայրում Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ մայրաքաղաքի հուշահամալիրում կառուցվող զանգակատան շինարարական աշխատանքներին: Աշակերտական խորհրդի առաջարկն ընդունվեց, և նրանց կողմից այդ ծրագրի հաշվեհամարին փոխանցվեց 80 հազար ՀՀ դրամ:

Հիրավի, ճշմարիտ է ասված, որ այսօր՝ Ապրում ենք ոգեկոչելով, Ապրում ենք պահանջելով, Ապրում ենք պայքարելով, Ապրում ենք հավատքով:

Մենք լավատես ենք. կգա օրը և 100-ամյա անդրադարձից արձագանքված՝ կառույցի՝ զանգակատան զանգերը հավերժ կողողանան՝ ավետելով հայությանը խաղաղ գարուններ ու պայծառ, երջանիկ օրեր...

Թող ոչ մի ազգ հայի ցավը չստեսնի... Ֆիշում են և պահանջում....

Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ «Ստեփանակերտի Վ. Զիանգիրյանի անվան համար 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ՄԿԱԳՏՏ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ  
ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ( 1894-1923թթ.)

Հայոց դպրոցի դարավոր պատմության մեջ առանձնահատուկ կարևորությամբ ենթադրվում է հատկապես հայ ազգի բազմադարյան պատմության այս ժանրը և նույնիսկ պարսկական գերխնդրին: Այս պատմական հայոց պատմության մեջ դրոշմվեց որպես հայ ժողովրդի զանգվածային կոտորածների գեղասպանության ժամանակաշրջան: Բազմաթիվ հայ և օտար ուսումնասիրողների հետ համակարծիք լինելով՝ ևս մեկ անգամ ընդգծենք, որ հայերի Յեղասպանության պատմական անհերքելի փաստը ոչ թե կոնկրետ 20-րդ դարի սկզբի ոճի կարելի է դիտարկել, այլ փաստել, որ նրա արմատները մխրձված են եղել դեռևս ախարի դարում: Պատմական, իրավական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թուրքական իշխանությունները դեռ վաղուց էին գիտակցում բռնազավթած հայկական տարածքներում իրենց գերակայությունը ցանկացած գնով ապահովելու անհրաժեշտությունը և իենց այդ պատճառով ոչ միայն հետևողականորեն իրականացնում էին հայ և այլ քրիստոնյա ազգերին հարկային անասելի ծանր բեռի տակ ծնկի բերելու, այլ և Արևմտյան Հայաստանի եթնիկական դիմագիծը փոխելու քաղաքականությունը զանգվածային ջարդերի և տեղաբնակներին թուրքացնելու միջոցով: Ընդ որում, Հայկական հարցը վերջնականապես լուծելու համար Օսմանյան կայսրությունը որդեգրեց նաև հայկական տեղանունների արաբական կամ անվանափոխման քաղաքականություն: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կառավարությունը Հայաստան ամուրը փոխարինեց հնարավոր Քրդստան կամ Անատոլիա եզրույթներով՝ ձգտելով հասկանալ, որ Հայկական հարց գոյություն չունի, քանզի չկա Հայաստան, չկա նաև Հայկական հարց: Այսպես, զանգվածային գեղասպանությունը իրագործվեց՝ 19-րդ դարի 90-ական թվականներին սկսած և շարունակվեց մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Այսինքն, Հայոց գեղասպանությունը ներառում է 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված գեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայրենյան ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկ գաղթները, հայկական ժառանգության մշակութային արժեքների ոչնչացումը, ինչպես նաև գեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետևանքները լուրջան մատնելու կամ արդարացելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն և նոր գեղասպանություններ իրականացնելու քաջակերպ: Իսկ Օսմանյան կայսրության կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանի նահանգների, Կիլիկիայի հայ բնակչության զանգվածային բռնի տեղահանությունն ու բնաջնջումը 1914-1918 թվականներին համարվում է Հայոց գեղասպանության պատմության ամենաողբերգական էջը, որը հայ ազգի բազմադարյան պատմության մեջ ընդմիջող դրոշմվեց Հայոց մեծ եղեռն անունով, որի մասին յուրաքանչյուր հայ խոսում է թախիծով, հուզմունքով և սգով: Այն կազմակերպեցին ու իրականացրին Թուրքիայի կառավարող շրջանները՝ երիտթուրքերը՝ Առաջին համաշխարհային պատերազմի ջողի տակ:

Նախքան գեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում և Քենալական Թուրքիայում հայկական դպրոցների կարգավիճակին անդրադառնալը կցանկանայի պատմական ակնարկով ներկայացնել արևմտահայ դպրոցի անցած պատմական ուղին, որի ուսումնասիրությունը ազգային կրթական համակարգում խիստ անհրաժեշտություն ենթադրվում է:

Թուրքիայում կրթական գործը սկզբնական շրջանում գտնվում էր մահմեդական հոգևորականության տնօրինության տակ և ծայրահեղ կրոնական բնույթ էր կրում: Սելիմ III (1789-1807) և Մահմուդ II (1808-1839) սուլթանները, հետամուտ լինելով ռազմական գործի կարգավորմանը, առաջին փորձերն արեցին աշխարհիկ կրթություն տարածելու ուղղությամբ: Նրանց ստեղծած ուսումնարանները գիմնազիական բնույթ ունեին: Արևմտահայ իրականության մեջ աշխարհիկ կրթական նոր շարժումն ուղղորտ առաջինը թևակոխեցին Կ. Պոլիսի իր շրջակայքով, և մասամբ՝ ձմյուռնիսան: Նշենք, որ Կ. Պոլիսն էլ եղել է արևմտահայերի կրթական կյանքի ուղղություն տվողը:

Հայերի աշխարհիկ նոր դպրոցը Կ. Պոլիսում սկիզբ առավ XVIII դ. վերջերին, երբ Սելիմ III-ը 1789թ. արտոնեց հայոց պատրիարքարանին եկեղեցիներին կից դպրոցներ բացել: Այդ արտոնագրի հիման վրա առաջին դպրոցը բացվեց Գում Գափուում՝ մայր եկեղեցուն կից, Մկրտիչ (Շնորհ) ամիրա Միրիանյանի նախաձեռնությամբ: Պատմական այս կարևոր

իրադարձությամբ հիմք դրվեց հայկական թաղային դպրոցներին: Կարճ ժամանակում նման դպրոցներ բացվեցին նաև Սամաթիա, Օրթագյուղ, Պալաթ, Ղալաթիա, Սկյուտար թաղերում: Կ. Պոլիսի հայերի օրինակին հետևեցին նաև Ձմյուռնիայի հայերը:

Արևմտահայ կրթական համակարգում որոշակի աշխուժություն նկատվեց հատկապես 19-րդ դարի սկզբներին, երբ կրթական բարելավման գործն իր ձեռքն էր վերցրել Կարապետ Պալաթցի պատրիարքը, այնուհետև՝ Ստեփանոս Աղալմի պատրիարքը: Կարապետ Պալաթցի պատրիարքը 1824թ. հունիսի 10-ի կոնդակով պատվիրեց եկեղեցիներին կից դպրոցներ բացել: Իսկ Ստեփանոս Աղալմի պատրիարքը 1831թ. առաջարկեց էսնաֆություններին (առանձին միություններ) հոգալ առանձին դպրոցների ծախսերը:

Արևմտահայ դպրոցը նկատելի վերելք ապրեց 1840-60-ական թվականներին: Դա պայմանավորված էր հիմնականում Թանզիմատի (Սահմանադրություն) շրջանում կատարված փոփոխությունների և Ազգային սահմանադրության վերջնական հաստատումից հետո (1863թ.) ստեղծված ուսումնական նոր խորհրդի գործադրած արդյունավետ ջանքերով: Այդ տարիներին ազգային կրթության առաջադիմությունը առավել ցայտուն դրսևորվեց Կ. Պոլիսում: Եթե 1830-35 թթ. Կ. Պոլիսում կար մոտ 30 թաղային վարժարան, ապա 1870թ., ըստ Ազգային կրթական խորհրդի տվյալների, դրանք թիվը հասել էր 61-ի, որից 28-ը՝ իգական: Այդ դպրոցներն ունեին 3842 աշակերտ, 1862 աշակերտուհի և 226 ուսուցիչ: Ավելին, ըստ 19-րդ դարի 70-ական թվականների հաշվարկումների, 1870 թվականների սկզբին Թուրքիայում գործում էր 450-ից ավելի հայկական դպրոց՝ ավելի քան 24.000 աշակերտներով (3000 աղ-չիկներ):

Ցավով նշենք, որ այս հաշվարկումները կիսատ էին, քանզի Արևմտյան Հայաստանի մնացած տարածքների՝ Վան, Մուշ, Կարս, Երզրում, Ձմյուռնիա և այլ հայկական տարածքների դպրոցների մասին շատ քիչ տեղեկություններ են տրված, կամ էլ որոշ հայաբնակ վայրերի դպրոցների վերաբերյալ գրեթե տեղեկություններ չկան:

Արևմտահայ դպրոցի արժեքային համակարգում բարձր է գնահատվում Գում-Գափուի մայր վարժարանի (1790), Ձմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի (1799), Հռիփսիմյան և Գայանյան վարժարանների (1830), Սկյուտարի ճեմարանի (1838), Կարազա հինավուրց վարժարանի 1857թ. Սկրտիչ Խրիմյանի ստեղծած ժառանգավորաց դպրոցի, Խաչատուրի Ներսիսյան (19-րդ դարի երկրորդ կես) և Նուպար-Շահնազարյան արական (1866-1876), Սամաթիայի Սահակյան, Օրթագյուղի հայկական վարժարանների, Գում-Գափուի (նաև՝ Գում Գաբու) Սեզարյան երկսեռ վարժարանի (1865), Կարինի ժառանգավորաց վարժարանի (1885) և այլ ուսումնական հաստատությունների դերը:

Չնայած արդու-համիդյան վարչակարգի (Աբդուլ Համիդ Երկրորդ Օսմանյան Թուրքիայի սուլթան է եղել 1876-1909թթ.) խոչընդոտներին ու հալածանքներին՝ արևմտահայերի կրթալուսավորական գործը շարունակում էր իր որոշակի առաջընթացը: Դրա վրա օրինակ կարող է հանդիսանալ այն փաստը, որ «Միացյալ ընկերություն հայոց»-ի ջանքերով 1880-1884 թթ. արևմտահայ գավառներում բացվեց շուրջ 24 նոր դպրոց, որտեղ դասավանդում էր 115 ուսուցիչ և սովորում էր 2822 աշակերտ-աշակերտուհի: Ընկերությունը այդ վարժարանների համար տարեկան ծախսում էր մոտ 3000 օսմանյան ոսկի:

1890-ական թվականների հայկական կոտորածներին և համիդյան վարչակարգի դաժանություններին սաստկացման հետևանքով օրըստօրե ավելի էր ծանրանում արևմտահայերի ինչպես սոցիալ-տնտեսական, քաղաքական, այնպես էլ կրթական կյանքը: Դադարեցին գործելուց մի շարք կրթասիրական ընկերություններ և ազգային որոշ դպրոցներ: Արևմտահայությունը մեծ ջանքեր գործադրեց վերջնական կորստից փրկելու հայկական դպրոցը և պահպանելու ազգային նկարագիրը:

1897թ. Կ. Պոլիսի հայոց պատրիարք Օրմանյանի (Կ. Պոլիսի պատրիարք՝ 1896-1908թթ.) ջանքերով ստեղծվեց կոտորածներից տուժածներին օգնող՝ «Նպաստից հանձնաժողով»-ը: Այդ հանձնաժողովին նյութական մեծ օգնություն ցուցաբերեցին արևմտահայերը: Ստեղծվեց 35 որբանոց, որոնք ունեին իրենց դպրոցները: Ըստ Կ. Պոլիսի «Նպաստից հանձնաժողով»-ի հաշվեցուցակի՝ 1903թ. հանձնաժողովից նպաստ ստացող դպրոցների թիվը հասնում էր 80-ի:

Արևմտահայության համար այդ ծանր ժամանակահատվածում իր ազգամեր գործու-

նությունն է ծավալել Արմաշի վանքի դպրոցը, որի դերակատարությունը պատմագրության մեջ համեմատվում է Արևելյան Հայաստանում կրթության բնագավառում մեծ գործունեություն ծավալած Պարոյան ճեմարանի հետ: Խորեն Աջղայան պատրիարքը Մ. Օրմանյանի և մեծահարուստ Արիզ Ունեյանի աջակցությամբ 1889թ. հիմնում է Արմաշի դպրեվանքը: Այստեղ ուսուցման առաջին երեք տարին հավասարեցված էր լրիվ միջնակարգ դպրոցի ծրագրին, և այն ավարտողները արդեն կարող էին ուսուցչություն անել: Հաջորդ երեք տարին նախատեսված էր կրոնական բարձրագույն կրթության համար: Բարձր հիմքերի վրա էր դրված հայագիտական և լեզվական առարկաների դասավանդումը: Մինչև 1914թ. շուրջ 221 շրջանավարտից միայն 39-ն էր հոգևոր կոչում ընդունել, մյուսներն իրենց նվիրել էին մանկավարժական գործունեությանը:

Այդ դժգոյակ տարիներին արևմտահայությունը հայկական դպրոցների պահպանման համար կազմակերպել էր նաև հանգանակություն, որին մասնակցել էին մեծ թվով հայ մեծահարուստներ: Կարևորվում է արևմտահայ մեծահարուստ Գևորգ աղա Մարյանի ազգանվեր գործունեությունը, ով իր միջոցներով Կարին քաղաքի ծայրում գնել էր երկու մեծ սենյակ՝ պարտեզով և աղբյուրներով, ազգային դպրոց բացելու նպատակով: 1889թ. այդտեղ բացվում է հայկական վարժարան, որն էլ կրում էր բարերարի անունը: Այնտեղ դասավանդում էին հայոց լեզու, թվաբանություն, պատմություն, կրոն, աշխարհագրություն, գծագրություն, երգ, գեղագիտություն, մարմնամարզություն: Այդ դպրոցում երկար տարիներ դասավանդել են Ե. Մակարյանը, Բ. Էրանյանը, Կ. Թագաճյանը, Ս. Գաֆաճյանը և ուրիշներ: Կարժարանը գոյատևել է մինչև 1912 թվականը:

Արևմտահայության համար ծանր պայմաններում ուշագրավ գործունեություն են ծավալել Կարինի (Երզրումի) ազգային վարժարանները: 1900-1901 թթ. Կարինի ազգային վեց վարժարաններում (Արծնյան, Հռիփսիմյան, Մարյան, Տ. Աղաբյան, Աղապալյան, Սանասարյան) սովորում էր շուրջ 1988 աշակերտ՝ 71 ուսուցիչներով: Այդ նույն ուսումնական տարում Կարինի օտարամուտ հինգ վարժարաններում (Ամերիկյան դրբանոց, Ամերիկյան վարժարան, Ֆրեդերիկ վարժարան, Մայրապետաց վարժարան, պետական վարժարան) սովորում էր 182 աշակերտ:

Արևմտահայության կրթալուսավորական կյանքում իր ինքնատիպությամբ առանձնանում է պետերբուրգի հայ մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի (1818-1890) անունը կրող վարժարանը: Կարինի հոգևոր թեմի առաջնորդ Մ. Օրմանյանի անմիջական մասնակցությամբ Սանասարյան վարժարանի համընդհանուր բացումը տեղի էր ունեցել 1881թ. հոկտեմբերի 1-ին, որին մասնակցում էին Կ. Պոլիսի, Վանի, Խարբերդի և այլ վայրերի ներկայացուցիչներ: :

Այդ վարժարանի մասին իր տպավորություններն մասին է նշում Հ. Աճառյանը, ով 1894-1895 ուսումնական տարում հրավիրվել էր Կարինի Սանասարյան վարժարանում պաշտոնավարելու: Վաստակաշատ լեզվաբանը դառնությամբ է հիշում այն օրերը, երբ թուրք դահիճները վարժարանն առել էին թնդանոթային կրակի տակ :

Չնայած արևմտահայության համար քաղաքական ծանր պայմաններին՝ Սանասարյան վարժարանը կարողացավ տալ հարյուրավոր շրջանավարտներ, որոնք մեծ ներդրում ունեցան հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում: 1912թ. Սանասարյան վարժարանը խնամակալության (պատրիարքի) կարգադրությամբ փոխադրվեց Սեբաստիա և գործեց մինչև Հայոց մեծ եղեռնը, որի զոհը դարձավ վարժարանի աշակերտների ու ուսուցիչների մեծ մասը, իսկ ողջ մնացածները ցիրուսան եղան աշխարհով մեկ:

Հայոց գեղասպանության տարիներին արևմտահայ դպրոցական կյանքի մասին ուշագրավ պատմական փաստեր են պահպանվում Երևանի Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտի համապատասխան արխիվային ֆոնդերում: Այդ նյութերի բաղկացուցիչ մաս են կազմում Արևմտյան Հայաստանի դպրոցների շրջանավարտների լուսանկարները: Այդ արժեքավոր լուսանկարների մի մասը տեղադրված է ինստիտուտի պաշտոնական կայքէջում: Ուշագրավ այդ փաստերում ներկայացված են 1893թ. Մարաշի ակադեմիայի և ուսուցչական կազմի ու ուսանողության, 1893-1894թթ. Կ. Պոլիսի Կետրոնական վարժարանի շրջանավարտների, 1897թ. Այնթապի (այժմ՝ Գագինաբեյ) Ներսիսյան Ազգային վարժարանի շրջանավարտների, 1897թ. Հանքի Ակադեմիայի առաջին շրջանավարտների և ուսուցչական կազմի, 1899-1900թթ. Արմաշի դպրե-

վանքի շրջանավարտների, 1900թ. Երզրումի օրիորդաց վարժարանի, 1900թ. Ադաբազարի օրիորդաց վարժարանի, 1902թ. Սեբաստիայի Հռիփսիմյան վարժարանի շրջանավարտների, 1906թ. Ամասիայի, Իբրանոսյան իգական վարժարանի աշակերտուհիների, 1907-1908թթ. Տրապիզոնի Ազգային վարժարանի շրջանավարտների, 1908թ. Խարբերդի, Եփրատե քուլեջի ավարտական դասարանի շրջանավարտների, 1908-1909թթ. Ձմյուռնիայի Հռիփսիմյան իգական վարժարանի ուսուցչական կազմի, 1907թ. Սեբաստիայի Արամյան Ազգային վարժարանի շրջանավարտների և ուսուցիչների, 1910-ական թթ. Այնթապի օրիորդաց վարժարանի, 1910-ական թթ. Ձմյուռնիայի Մ. Մետրոպոլիտ արական վարժարանի ութերորդ դասարանի աշակերտների, 1910-ական թթ. Ուրֆայի հայ կանանց կարի դպրոցի, 1911թ. Երզնկայի Եզնիկյան վարժարանի ուսուցչական կազմի ու շրջանավարտների, Ամասիայի 1911թ. Յիսուսյան հայրերի Բարձրագույն վարժարանի ուսանողության, Ադաբազարի 1912թ. Գայանյան վարժարանի շրջանավարտների, Այնթապի 1913թ. Կարդանյան կրթարանի շրջանավարտների, 1914թ. Սեբաստիայի Արամյան վարժարանի շրջանավարտների, 1914թ. Մարաշի Աստվածաբանական ճեմարանի շրջանավարտների և ուսուցչական կազմի, 1916թ. Ձմյուռնիայի Մ. Մետրոպոլիտ վարժարանի շրջանավարտների, 1920-1921թթ. Էտեմիշի (Բզնիկում) Ազգային վարժարանի շրջանավարտների լուսանկարները:

Վերոնշյալ այս պատմական փաստերը խոսում վկաներ են Արևմտյան Հայաստանում այդ որբերգական ժամանակաշրջանում բազմաթիվ հայկական դպրոցների առկայության համար:

Սակայն, մեծ ցավով նշենք, որ Օսմանյան կայսրությունում և Քենալական Թուրքիայում իրականացրած հայ բնակչության զանգվածային կոտորածներին ու տեղահանությանը համընթաց՝ համիդյան, երիտթուրքական, քենալական վարչակարգերը կամրախանության և ծրագրավորված իրականացում էին նաև մշակութային եղեռն՝ ձգտելով ոչնչացնել նաև հայկական քաղաքակրթության նյութական բոլոր վկայությունները, որոնց մասին են վկայում բազմաթիվ պատմական և իրավական փաստեր: Ազգային դպրոցները Մեծ եղեռնի տարիներին ստիպված էին դադարեցնել իրենց գործունեությունը, իսկ հայ մտավորականության մեծ մասը զոհ գնաց Մեծ եղեռնին: Միայն Կ. Պոլիսում ապրիլի 24-ին և հաջորդ օրերին ձերբակալվեցին և Անաստիայի խորքերն աքսորվեցին մոտ 800 հոգի՝ գրողներ, լրագրողներ, բժիշկներ, գիտնականներ, հոգևորականներ և մշակույթի այլ ներկայացուցիչներ: Յեղասպանության զոհ դարձան Գրիգոր Չոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Չարդարյանը, Ռուբեն Սևակը, Արտաշես Հարությունյանը, Թվատիցին, Երուխանը, Տիգրան Չյուկուրյանը, Ամբատ Բյուրաթը, հրապարակախոսներ ու խմբագիրներ Նազարեթ Տաղավարյանը, Տիրան Զեյնկյանը, Գագիկ Օզանյանը և ուրիշներ: Աքսորյանների մեջ էր նաև հայ մեծ երգահան Կոմիտասը, որը, չլինանալով հոգեկան ծանր ապրումներին, խելագարվեց: Հետագայում նա վերադարձվեց Կ. Պոլիս՝ հոգեբուժարան, իսկ ապա՝ Փարիզ, որտեղ և վախճանվեց: 1915թ. հունիսին Կ. Պոլիսի հրապարակներից մեկում կախաղան բարձրացվեցին հնչակյան կուսակցության անդամ 20 նշանավոր մտավորականներ:

Հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ երիտթուրքերի որդեգրած ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց նաև քենալականների կողմից (1920-1923թթ), քանզի դրանք դիտվում էին որպես հայ ժողովրդի ներկայության անցանկալի վկաներ: Հայոց մեծ եղեռնի տարիներին ավերվեց ավելի քան 66 քաղաք ու ավան, 25000 գյուղ, 2350 վանք ու եկեղեցի, շուրջ 1500 դպրոց և այլ մշակութային արժեքներ:

Յեղասպանությունից մազապուրծ եղած արևմտահայերն իրենց մշակութային գործունեությունը շարունակեցին արտերկրում:

Ընդհանրացնելով նշենք, որ վերջ նշված մեր տեղեկությունները ևս մեկ անգամ ապացուցում են այն պատմական ճշմարտությունը, որ չնայած ուսումնասիրվող ժամանակաշրջանում արևմտահայերի ծանր պայմաններին՝ հայ մշակույթի անխոց ներկայացուցիչները շարունակել են իրենց ազգամեր լուսավորական գործունեությունը և ստեղծել ազգային գիտակրթական նշանավոր օջախեր:

Գրիգորի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
«Գրիգոր Նարեկացի» համալսարանի  
դասախոս

ՀՐԱՅԱՓԱՌ ՏՈՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԺԱՆԻ ԸՆԴՕՐԻՆԱԿԱՆ

Ձ անագանել չարն ու բարին՝  
Ա ըարելով բարի գործեր,  
Տ իրոջ աչքին հաճո լինել:  
Ի բրև արդար ու ազնիվ մարդ,  
Կ յանքը լավով, ճշտով լցնել:

քին չամիչով փլավի կաթսան, բաժանեց թոռնե-  
րին՝ հորդորելով ուշադիր ուտել, քանի որ  
փլավն իր մեջ պարունակում է փոքրիկ անակն-

րացած մեր հայրենիքում հային մշտապես ուղե-  
կից կլինեն հույսը, հավատը, սերը:

Միջոցառման կազմակերպիչ Լիանա Ծատր-  
յանի հասցեին շնորհակալական խոսք ասաց  
քաղաքապետարանի աշխատակազմի կր-  
թության և սպորտի բաժնի մասնագետ Անա-  
հիտ Մեսրոպյանը, ով նախ և առաջ բարձր  
գնահատեց գիշերօթիկի սաներին հրավիրե-  
լու նախաձեռնությունը՝ առաջարկելով այն  
դարձնել ավանդույթ:

Յուզիչ էր հ. 12 հիմնական դպրոցի տնօ-  
րեն Էլմիրա Գաբրիելյանի խոսքը, ով սանե-  
րին մաղթեց ամենալավն ու բարին, երջանիկ  
ապագա, և ամենակարևորը՝ մեծ ձեռքբերում-  
ներ ունան բնագավառում: Նա դպրոցի  
անունից գիշերօթիկի սաներին նվիրեց  
կոնստրուկտորներ՝ հույս հայտնելով, որ սա-  
ներն այն կօգտագործեն՝ ի մի բերելով իրենց  
խելքն ու ճկունությունը:

Իրենց շնորհակալանքի խոսքը հնչեցրին  
նաև գիշերօթիկի դաստիարակները ման ընդու-  
նելության համար՝ հավաստիացնելով, որ այդ  
հանդիպումը երկար կմնա սաների հիշողության  
մեջ:

Լիա ՂԱԼՅԱՆ



կալ. ում ափսեի մեջ դուրս գա, հաջողությունը  
ողջ տարին կուղեկցի նրան: Այնուհետև սկսվեց  
հավկիթակռիվը:

Երեխաները լիաթք ուրախանում էին, իսկ  
ավելի մեծ էր գիշերօթիկի սաների ոգևորությու-  
նը, քանզի Տատիկը նրանց ևս բաժանեց քաղց-  
րավենիք և մաղթեց չարից ու փորձանքից հեռու  
լինել: Վերջում աշակերտները մաղթեցին բոլո-  
րին՝ երբեք չկորցնել փրկության հույսն ու հա-  
վատը՝ հավաստելով, որ հարության լույսով գո-

Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրո-  
ցի դասվար Լիանա Ծատրյանի մտահղա-  
ցումներն իրենց բովանդակությամբ անկրկ-  
նելի են, ուսուցողական և արժանի ընդօրի-  
նակման: Բացառություն չէր Սուրբ Ջատիկն  
նվիրված միջոցառումը, որին հրավիրված էին  
նաև Ստեփանակերտի գիշերօթիկ հաստա-  
տության սաներն ու դաստիարակները: Մի-  
ջավայրն ինքնին տրամադրող էր. զատկա-  
կան ուտեստներ, տոնին նվիրված քառատո-  
ղեր, տիկնիկներ, երազանքի իրականացման  
ծառ, դասասենյակի անկյուններում՝ եկեղե-  
ցիների մանրակերտեր, մոմակալներ և այլն:  
Գարնան զարթոնքին նվիրված երաժշտության  
ինչյունների ներքո բեն դուրս եկան աշակերտ-  
ները, մոմեր վառեցին և լուռ աղոթք հղեցին առ  
Աստված: Ավելի քան մեկ ժամ տևողությամբ մի-  
ջոցառումը ներկաներն ըմբռնեցին մեկ շն-  
չում, քանզի աշակերտների շուրթերից բխած  
անկեղծ արտասանություններն ու հոգևոր երգե-  
րը, տոնին նվիրված պատմությունները տրա-  
մադրող էին: Երգելով ներս մտավ Տատիկը՝ ձեռ-

ՉԱՏԻԿԸ՝ ՆԱԽԱԳՊՐՈՋԱԿԱՆ ԽՄԲՈՒՄ

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցում կազմակերպ-  
վեց ընդօրինակման բաց պարապմունք մայրենիից նախադպրոցական «Արևիկ»  
խմբում (դաստիարակ՝ Իննա Նասիբյան): Հրավիրված էին հյուրեր, ուսուցիչներ,  
ծնողներ, մայրաքաղաքի տարբեր դպրոցների նախադպրոցական խմբերի դաստի-  
արակներ: Դահլիճը կա-  
հավորված էր զարմանա-  
յին լուսավոր տոնին հա-  
մահունջ:

Հայկական տարա-  
զով ներս մտան խմբի  
երեխաները և բարի լուրի  
ավետիսով ողջունեցին  
ներկաներին՝ ասելով, որ  
Ջատիկը խորհրդանշում



է Հիսուս Քրիստոսի  
հրաշափառ հարության  
տոնը: Այն կապված է  
Քրիստոսի տառապանք-  
ների, մահվան ու հարու-  
թյան պատմության հետ,  
և տոնում են մեծ հանդի-  
սավորությամբ: Սովորա-  
բար այդ տոնին զատկա-  
կան կերակուրներ են  
պատրաստում՝ չամիչով

փլավ, ձուկ, բանջարեղեն, ձու են ներկում կարմիր գույնով՝ ի նշան Քրիստոսի ար-  
յան: Երեխաները Ջատիկին նվիրված ոտանավորներ արտասանեցին, երգեցին,  
ներկաներին հիացրին պարով:

Վերջում գոհունակության ու շնորհավորանքի խոսք ասացին դպրոցի տնօրեն  
Անահիտ Պողոսյանը, քաղաքապետարանի կրթության ու սպորտի բաժնի գլխավոր  
մասնագետ Թերեզա Ղարախանյանը, եկեղեցու ներկայացուցիչ Տեր Մաթևոսը:  
Նրանք ընդգծեցին, որ պարապմունքը ևս մեկ հնարավորություն է մոտենալու մեր  
ազգային գեղեցիկ սովորույթներին, ճանաչելու ինքներս մեզ, կարևորելու ազգային  
արժեքների իմացությունը:

Վ. ՍՈՒԼԵՅԱՆՅԱՆ  
Սպեփ. հ. 7 հիմն. դպրոցի նախադպրոցական  
բաժանմունքի վարիչ

Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան հ. 1 հիմ-  
նական դպրոցի նախադպրոցական «Արև» խումբը կազմա-  
կերպել էր Ջատիկի օրվան նվիրված միջոցառում: Ներկա էր  
Ասկերանի եկեղեցու քահանա տեր Էմանուելը, ում օրհնու-



թյունից հետո սկսվեց միջոցառումը: Ջարդարված դահլիճը  
տոնական տրամադրություն էր ստեղծում: Ակնհայտ երևում էր,  
որ երեխաները լավ են պատրաստվել: Մի կողմից նրանց հա-  
զուկապը (ազգային-հայկական տարագ), մյուս կողմից՝ իրենց  
իսկ ձեռամբ պատրաստած զատկական խորհրդանշանները հի-  
ացնումը էին առաջացնում:

Նրանք ասմունքի, երգ ու պարի միջոցով ներկայացրին,  
թե ինչպես պետք է զարդարել Ջատիկի սեղանը, և որոնք են  
ավանդական կերակրատեսակները:

Խմբի դաստիարակ Թամար Դավթյանը խոստովանեց.  
- Երեխաների հետ աշխատելու միայն մի մեթոդ գիտեմ,  
պարզապես սիրել երեխաներին և հաշվի առնել նրանց կար-  
ծիքը: Միայն այս դեպքում կարող ենք համաձայնության  
գալ:

Նա նշեց նաև, որ ամեն տոն օրվա կապակցությամբ միջո-  
ցառումներ են կազմակերպում: Այսօրինակ միջոցառումները  
երեխաների հոգում բարություն են սերմանում:

Լուսինե ԱՂԱԶԱՆՅԱՆ

Շնորհավորանք

ԵՌԱՆԴՈՎ ՈՒ  
ՆՎԻՐՈՒՄՈՎ



Համբերատար, բարի ներող,  
Չարին բարի լուծում տվող,  
Մեծին հարգող, փոքրին սիրող,  
Հայրենիքի համար կռվող  
Ուսուցիչ է մեր դպրոցում:

Ասում են՝ ուսուցչի ամենամեծ քննադա-  
տը աշակերտն է: Տարիներ առաջ այսպես է  
արտահայտվել դպրոցի աշակերտներից  
մեկը Մարտակերտի շրջանի Վերին Հոռա-  
թաղի Ք. Քոքսի անվան միջնակարգ դպրո-  
ցի մաթեմատիկայի ուսուցչուհի Սվետլանա  
Լալայանի մասին:

Անցել են տարիներ, սակայն անփոփոխ  
է մնացել մանկավարժ-մարդու հյուսած դի-  
մագիծը՝ բարեհամբույր ու բանիմաց,  
եռանդուն ու պատրաստակամ, լավատես  
ու կարեկից:

Սվետլանա Լալայանը ծնվել է 1955թ.  
ապրիլի 10-ին, Մարտակերտի շրջանի  
Դրմբոն գյուղում: 1978թ. ավարտել է Ստե-  
փանակերտի մանկավարժական ինստի-  
տուտի մաթեմատիկայի բաժինը:

1973թ. աշխատանքի է անցել Վերին Հո-  
ռաթաղի դպրոցում՝ որպես մաթեմատիկա-  
յի ուսուցչուհի, իսկ 1980-ից նույն դպրոցի  
փոխտնօրենն է:

Իր ողջ կյանքում նա աշխատել է  
ամենացորդ նվիրումով՝ կարևորելով  
մարդկային արժեքները:

Ս. Լալայանը իր առարկայի հմուտ գի-  
տակ է Պրպտուն ու հետաքրքրասեր ման-  
կավարժը կարողանում է վարպետորեն հա-  
մադրել ավանդական և նոր մեթոդները՝  
դասը դարձնելով հետաքրքիր ու արդյու-  
նավետ: Մանկավարժական փորձն ու հա-  
րուստ գիտելիքները նա սիրով փոխանցում  
է թե՛ իր սաներին և թե՛ գործընկերներին,  
տալիս նրանց հուզող ցանկացած հարցի  
պատասխանը:

Անչափ սիրելով իր առարկան՝ զրու-  
ցակցին շեղում է ու տանում մաթեմատիկա-  
յի խայտաբղետ ու հետաքրքիր աշխարհ՝  
կյանքում ամեն երևույթ կապելով մաթեմա-  
տիկական ճշմարտության հետ:

Անափ հայրենասիրությամբ օժտված  
այս հայուհին հարկ եղած դեպքում գրիչը  
փոխարինել է գեղեցիկ: 1992-1993թթ. որպես  
կապավոր ծառայել է 5-րդ պաշտպանա-  
կան շրջանի 2-րդ հրաձգային գումարտա-  
կում:

Պետությունը բարձր է գնահատել նրա  
ներդրումը Արցախյան շարժման և պատե-  
րագմի մասնակցության գործում՝ պար-  
գևատրելով «Մարտական ծառայություն»  
մեդալով:

Ս. Լալայանը այսօր էլ շարունակում է  
անխոնջ մանկավարժի և ակտիվ քաղաքա-  
ցու իր ուղին՝ եռանդով ու նվիրումով:

60 երկար ու տքնաջան, բայց և բովան-  
դակալից տարիներ է ապրել Ս. Լալայանը՝  
ճաշակելով նաև շատ դառնություններ: Սա-  
կայն կյանքի հանդեպ լավատեսորեն տրա-  
մադրված այս կնոջը միշտ տեսնում ենք  
բարի ժպիտը դեմքին, բարետես արտաքի-  
նով, կանացի ու հմայիչ:

Սիրելի՛ տիկին Լալայան, ողջ կյանքի-  
վը շնորհավորում է Ձեզ 60-ամյա հոբելյանի  
առթիվ՝ ցանկանալով քաջառողջություն,  
ուժ ու կրողով, բեղուն ու արգասաբեր աշ-  
խատանք:

Թող գարնան թարմությամբ լցվի Ձեր  
յուրաքանչյուր օր:

Մարտակերտի շրջանի Վերին  
Հոռաթաղի Ք. Քոքսի անվան  
միջնակարգ դպրոցի աշխատակազմ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԼԵՌՆԻԿ ԶԱԿՈՐՔԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՃԽԱՐԿԸ



Արդի հայ քնարագույն մեջ իր աննկատ ներկայությամբ, բայց և բանաստեղծական բնատուր շնորհքով օժտված արցախյան ու ողիսկայան մի ոգի է շրջում՝ հայրենի եզերքի ու բանաստեղծական իր տան որոնումով՝ չորս բանաստեղծական գրքույկներով («21 տարեկան»), («Պահին շողջողոցի»), «Դարի Դամբարան», «Հոգու արալեզներ»):

Տակավիճ 21 տարեկան հասակում, ուսանողական նստարանից փախած, զենքը ձեռքին իր հայրենիքն ու ծնողներին պաշտպանող զինվոր գիտակցում է արցախյան որդու փիլիսոփայությունը, որ «Որդին դառնում է հայրենիք» (էջ 3), ի սկզբանե իմանալով, որ «Տերևների ժամանակը» թափվել է (էջ 3): Ոչ միայն զգալով, այլև ասելով ու ցավով տեսնելով ընկնող տերևների ժամանակը: Հայրենիքի զինվոր բանաստեղծը հոգին զենքի հետ է հանձնատու, որը գրոհին նախորդող օրը մաքրում է և դիմում հասակակից ընկերներին՝ միասնաբար հայրենիքի համար մղվող մարտին, որ չօգտագործվող զենքի նման չձանգոտվեն նրանց հոգիները (էջ 5): Բայց սա չարի արտահայտություն է, նա գիտի նաև խաղաղության տեղը՝ այն զենքերի անխոսություններում է (էջ 4):

Իսկ ծննդյան օրվա առթիվ գրված երգում հպարտությամբ հաղթանակած զինվոր իրեն կրկնակի հաղթանակած է զգում հայոց բարակիրան նախորդան աղջիկների ներկայությամբ, մանավանդ երբ դրանցից մեկը ողջույնի նման պատահաբար հպվում է նրան (էջ 6): Կնոջ ներկայությունից շոյվող բանաստեղծի համար Ստեփանակերտում զոհված աղջիկն այս արյունոտ աշխարհի գլխատված երազն ու կարոտն է, որի տեսիլը զինվոր բանաստեղծին կրկին լեռներն է տանում պատերազմելու (էջ 8): «Վերջին անգամ» բանաստեղծության մեջ ակնհայտ է դառնում մարտի զնացողի հոգեբանությունը (էջ 9):

Արցախյան պատերազմը սուկ հայ-արդրեջանական հակամարտություն է: Դա հսկա տերությունների իրենցից հեռու, այլոց արյան գնով մղվող պատերազմ է, որը հստակ գիտակցվում է երիտասարդ զինվորի կողմից:

Հսկա տերերի քաղաքականությունը կոշտ ցախավելի նման Շոյում է փոքր աշխարհների Ազատության ջղերը եվ դրանք լուսավորում Վերերկրյա մի փայլով, Որով այնքան հարուստ են Ձոհերի աչքերը (էջ 11):

Աստված ստեղծել է երկինքը, որպեսզի արծիվները սիրեն իրար, մինչդեռ այնտեղ կործանիչ հրթիռներ են սուրում, ճանփաները նրա համար են, որ սպասողները հասնեն իրար, մինչդեռ դարանակալ

ականները պայթում են ոտքերի տակ, դաշտերը նրա համար են ստեղծվել, որ հղիանան ցորենի հասկով, մինչդեռ հրասայլերը բռնաբարում են ցորենի ծնունդը (էջ 13): Աշխարհի խոհական այս ընկալումն ի վերջո իմացության անհեթեթության է վերածվում՝ հրաշք աշխարհի երագի և իրականության հակադրությամբ:

Բայց պատերազմի սարսափը չի կասեցնում նրա կենսասիրությունը, արկերի որոտի հռնդյունը դառնում է հարսանեկան երգ, ջահել ու սիրառատ զինվորը զենքը ձեռքին իր սիրո հեքիաթն է հյուսում «Հարսնացուն» բանաստեղծության մեջ (էջ 15): Ակամայից ծնվում է կապուտաշյա հայրենիքի միրածը (էջ 17): Բանաստեղծական մի ինքնատիպ ու անկրկնելի գլուխգործոց է «Արփազյարուկի գոհերը»:

*Խոնավ գմբեթի տակ  
Կիսաբանդ եկեղեցու,  
Ուր գիշերվա դեղն են  
Լուսնին բռնաբարում,  
Սիւս դրված են չորս մարմին՝  
Ծեր ու արնաբան,  
Բզկտված, որպես իմ սիրտը:  
Քամու մատների անվարժ հպումից*

*Լույսերը ծռվել են դեմքերին  
Նրանց,  
Ասես շշուշում են մահվան  
ականցներին  
Վերջին աղոթքը անուժ ու հյուծված (էջ 22):*

Սա Արփազյարուկի արցախյան գոհերի սարսափազդու հոգեհանգստի տեսարան է, սրտի ցավից ծնված բանաստեղծություն, որն ազդարարում է իսկական բանաստեղծի ծնունդը:

Ամեն ակնթաթ տեսանելի է և սպասելի մահվան սարսափը, սակայն չի մթազնում վաղվա օրվա բարի հույսը:

*Հորս խոսքերը  
Պատուհան են լույսի,  
Պատուհան են հույսի,  
Որից ես նայում եմ  
Ծառի բարությանը (էջ 26):*

Չարմանալի կենսասիրություն ու հույսի սպասում կա ահասարտու այս օրերում, որ հոգևոր նեցուկ է դառնում ոչ միայն հոր իմաստնայած խոսքերով, այլև «Հույսի մոտ վառող» մոր կերպարով (էջ 21):

Պատերազմական այս անողոր օրերին, երբ հայրենիքի ցավից սիրող դառնում է «մի վանք» մենակ ու լքված», հանկարծ 21-ամյա երիտասարդի սրտի վանքում հայտնվում է մութ օրերի լուսավոր տիրուհին՝ իմաստավորելով կյանքը (էջ 41): Եվ դաժան օրերի ցավի մեջ հյուսվում է մի չքնաղ հեքիաթ:

*Քո աղջկական տաք / Մարմնի դիմաց, / Ես ծնկել էի / Բառերի արքաս,*

*Եվ բարձրանում է / Ծուխը բառերից / Մարտի սև ծուխը / Կապույտ փեշերիդ (էջ 44):*

Շամիրամի կերպարը մշտապես հուզել է մեր բանաստեղծներին, չարենցյան, շիրազյան և այլոց գրական մշակումներն ունեն իրենց խորքային ասելիքը, սիս Լեռնիկ Հակոբյանի «Շամիրամ» բանաստեղծությունը ևս եկել է նորովի բացահայտելու կյանքի ու արվեստի գաղտնիքները: Նորությամբ Արայի կերպարանք առած բանաստեղծը հարություն առած Արայի խոսքով դիմում է Շամիրամին:

*Չգոհվեմ, սիրեմ ես քեզ,  
Սիրեմ առյուծի պես ծարավ,  
Տրվեմ զգվանքներիդ այրող,  
Ուրիշ ո՞վ... (էջ 29):*

«21 տարեկան» գրքույկն արդեն իսկ ազդարարում է ինքնատիպ մի բանաստեղծի ծնունդը, ով գի-

տակցում է, որ ինքն այս ցավոտ հայրենիքի որդին է, բայց չի փախչում իր բախտից: Կյանքի ու մահվան սահմանագծին հյուսվում է մի քնարերգություն, որի մեջ սեր կա հայրենիքի, իմաստուն հոր ու հույսի մոտ վառող մոր, շամիրամական զգվանքներով կանչող իր սրտի տիրուհու հանդեպ: Բանաստեղծական առաջին գրքույկն ազդարարում է բառի զգացողություն ունեցող, գեղարվեստական պատկերավոր մտածողությամբ օժտված մի ինքնատիպ բանաստեղծի ծնունդը:

Յոթ տարի անց տպագրվում է Լեռնիկ Հակոբյանի երկրորդ գրքույկը՝ «Պահին շողջողոցի» վերնագրով: Այս ժողովածուում ընդգրկված են տարբեր տարիների գործեր, որոնք բանաստեղծական շարքի ընդհանուր տրամադրություն և հույզ չեն առաջացնում՝ ի տարբերություն նախորդ գրքույկի: Գրքույկը բացվում է «Իմ դարը» բանաստեղծությամբ, որն արցախյան ոգու հանդիպումն է դարին:

*Իմ դարը ինձ ողջունեց / Պատերազմով, արյունով...  
Ապա՝*

*Ուրախ երգեց, դողանցեց, / Արկերով և արյունով (էջ 3):*

Գրքույկում տեղ է գտել 1993թ. գրված «Տիգրան Մեծ» բանաստեղծությունը, որը թեև գեղարվեստականությամբ չի փայլում, սակայն իր գաղափարով ազգային գործունեության և ուժի հեթանոսաշունչ փառաբանություն է (էջ 5): Հայոց ոգուց է ծնունդ առել նաև արդեն գեղարվեստորեն հաջողված «Հայաստան» բանաստեղծությունը, որում արարված է կամքի Հայաստանը, որտեղ անանուն ու թանկ շիրիմներ կան, իմաստուն ու ահեղ պատգամներ, անմիջ ու մշտաբար երդումներ, վրեժ-լեռներ, ցեղի կանչ, վերջին ու լույսի շեփորներ (էջ 7): Այս բանաստեղծությունն իր գեղարվեստականությամբ ու գաղափարով առանձնահատուկ տեղ ունի գրքույկում:

«Պահին շողջողոցի» գրքույկում ձևավորվում են նաև բանաստեղծական խոսքի հմայքը և ինքնատիպ ու անկանխատեսելի պատկերային մտածողությունը:

*Ես ուզում եմ / Քո շուրթերով խոսել / Դարերիդ ու ժամանակների հետ, / Երգիս սեպը մխելով / Սիեզերքի աստղաբքի մեջ (էջ 10):*

Ամեն մի բանաստեղծ կյանքի իր փիլիսոփայությունն է դնում գեղարվեստական պատկերի մեջ, փորձում բացահայտել կյանքի առեղծվածը: «Կյանքը» բանաստեղծության մեջ (էջ 13) տանտիրոջ իրավունքով ծաղրածու դարձած կենսասեր իր արքայական տունն է համարում կյանքը՝ հանդես բերելով կյանքի ինքնատիպ ընկալման խոհական մտածոցում:

«Պահին շողջողոցի» բանաստեղծության մեջ էլ ասելու մի ինքնատիպ բանաձև է առաջադրվել: Երկնային քանթարի ուղին է դա, երբ շողջողում է հոգին և ոսկի պտուղ է տալիս բանաստեղծության տեսքով (էջ 21): Գեղեցիկի զգացողությունը ակնդետ հետևում է Լեռնիկ Հակոբյանին, նա գիտի գեղեցիկի արժեքը, բայց և գիտակցում է:

*Գիտեմ, ցավ է գեղեցկությունը պաշտել (էջ 26):*

Կյանքն ու գեղեցիկը զգալու և վայելելու բնատուր շնորհը բանաստեղծական ոգի է առել:

*Լիլի, սպրում եմ աշխարհում,  
Հմայքիդ արևին գերի,  
Սիրում եմ գեղեցիկ կանանց,  
Տարվում եմ հնայքով անանց,  
Եվ հիշում եմ խոսքը քո վերջին.  
- Երկնում, կապույտ երկնում (էջ 44):*

«Պահին շողջողոցի» գրքույկը հաստատում է արցախյան գեղեցիկ ասարելու կամքը, որով կերտվում է մոր Հայաստանի՝ կամքի Հայաստանը:

Եվս յոթ տարի անց՝ փոյի ձագի պես, ծնունդ է առել երրորդ գրքույկը՝ «Դարի Դամբարան»: Համբարան հակասությունների հանգույցում է ժամանակակից բանաստեղծը:

*Երբ քունդ է խռովահույզ,  
Երազներդ՝ դաժան,  
Երբ չի պտտվում երկիրը  
Քո ստվերի շուրջը,  
Երբ մոռացել ես հասցեն  
Քեզ սիրող տան,  
Մնում է հոտոտել  
Տարածությունն անգայթ  
Ու երազել հովիտն Ախերոնյան (էջ 3):*

Հեթանոսաշունչ երգեր են «Գարուն», «Ծառերն են ծաղկել» բանաստեղծությունները, որոնցում կան ինքնատիպ պատկերներ, ինչպես՝ գարունը սիրտ է գողանում, ցանում, կարմիր գարունը նստել է խնջույքի, և հարբել է հողը և այլն:

Բանաստեղծորեն ամբողջական ու ավարտուն գործեր են «Ինչու է մթնում օրը», «Երկինքն է սեղմվում», «Վարագույր հետևից», «Դարի Դամբարան» բանաստեղծությունները:

Այս գրքում բանաստեղծություններից բացի գետնի վրա են նաև «Կարոտ բիբլիական», «Հոգևոր երեկո», «Լույսի մեջ», «Հայր», «Հայաստանը, Երբ և ես» պոեմները:

«Հայր» պոեմում բացահայտվում է քանոնակերպորդ դարի հայր՝ իր ներքին խոհերով, երկրի ու հայրենիքի բախտի տազանայնությամբ:

*Հանրահավաքի վազող հայր  
Իր հոգում Ավարայր է վերապարում,  
Սակայն կաչում, խրվում է  
Առօրյա գործ ծյուրում,  
Գաճաճ առաջնորդների  
Կույր հայացքներում,  
Ու կիսատ է մնում  
Նրա երազը  
Հայաստանի մասին (էջ 55):*

«Հայր», «Հայաստանը, Երբ և ես» քնարական պոեմներում հայոց անցյալը, ներկան ու ապագան միասնաբար հյուսվել են բանաստեղծի ելույթանը:

*Կյանքն ունի իր երեք եզրերը,  
Իր երեք աղջիկները ցանկագրահո,  
Եվ թող մեկին կոչենք անցյալ,  
Մյուսին՝ ներկա,  
Իսկ նրան տես՝ ինչպես են հուզում կոնքերը,*

*Անդրձ պապագա,  
Մեկը տերն է մարմնի ու հիշողության,  
Մյուսը՝ մեր սրտի ու ոգեկոչման,  
Երրորդը տերն է մեր հույսի ու հուսախաբություն... (էջ 57):*

«Դարի Դամբարան» ժողովածուն ներքին հակասությունների բանաստեղծական շրջապտույտ է՝ հայրենիքի անցյալի, ներկայի ու ապագայի, նաև սեփական ես-ի հակասությունների ինքնաորոնման հանգույցներում:

2012թ. տպագրվում է «Հոգու արալեզներ» հեթանոսաշունչ բանաստեղծական շարքը, որտեղ ոգու ազատության ճախրանք կա: Շարքում անանկվալ հանդիպում է սպասվում եգիպտական աստվածների, թագուհիների հետ, ովքեր եկել են այլաբանելու բանաստեղծի անսահման սերն ու կիրքը, ասես արալեզների միջոցով վերհառնել է նրա մեջ եգիպտական սիրո ոգին՝ էխնաթոնի այրական զգացումով:

*Տաք է արգանդը հզոր թագուհու,*

*Հյուսիսի կարմիր արեգի նման,  
Բոց են կրծքերը կախարդ թագուհու,*

*Մոգերի վառած կրակի հանգույց (էջ 46):*

«Մերը մեռավ», «Անցավ ամառը», «Ժամանակը կբուժի ամեն վերք», «Ժամանակի բեղիկները» բանաստեղծություններն այս գրքույկի գեղարվեստորեն կառուցիկ գործերն են, սակայն ողջ շարքն աչքի է ընկնում մտածողության թարմությամբ, ինքնատիպ աշխարհընկալմամբ:

*Ողիսև և ամեն մարդ,  
Ո՛ր ես, իմ Իթակե,  
Եվ դեռ կաղնիներ կա՞ն  
Ափերիդ ժայռերին հպարտորեն կանգնած,*

*Որոնց ստվերներում  
Հավատի գամփռներ են  
Կեսօրվա տապին ննջում (էջ 36):*

«Հոգու արալեզներ» ժողովածուն թարմ շունչ է բերում, մոր պատկերային մտածողություն՝ զգացմունքների հորդման համար: Ձևավորվում է մի նոր բանաստեղծական մշակույթ, այն է՝ եգիպտական արքաների տեսանկյունից ու շուրթերով սեփական ներաշխարհը բանաստեղծորեն բացահայտելու ինքնատիպ արվեստ:

Ինտելեկտուալ պոեզիայի հունն է ընտրել Լեռնիկ Հակոբյանը, ում բանաստեղծական սկիզբը Արցախյան պատերազմի փիլիսոփայությունն է, որից շողջողոցի պահին անցում է կատարել կյանքի ու մահվան սահմանագծին գեղեցիկը տեսնելու, վայելելու և բանաստեղծորեն վերարտադրելու ձգտմանը, տարուբերվել իր ժամանակի համալեռնային հակասությունների հանգույցում, ապա հոգու արալեզների շնորհիվ ազատորեն տրվել սիրո ու կրքի նորովի ընկալման և վերարտադրման խորհրդավոր ոճին՝ հաստատելով բանաստեղծական իր ներկայությունը արդի քնարերգության մեջ:

Այժմ սակավախոս, բայց առողջ գրաքննադատության դիրքերից. թեև բանաստեղծին ուղղություն տալն անօգուտ մի գործ է, սակայն կցանկանայի ապագայում տեսնել Լեռնիկ Հակոբյանի զուլայված ու պարզ բանաստեղծական աշխարհը, քանզի ընթերցողին ասելիքը պարզ ասելու շահում է միայն բանաստեղծը: Լեռնիկ Հակոբյան բանաստեղծն, անշուշտ, ունի բանաստեղծական հզոր երևակայություն, ինքնատիպ պատկերային մտածողություն, սակայն նրա քնարերգությունն առավել առավել կողոնեմ բանաստեղծական ձևերի և տարբեր ժանրերի կիրառմամբ, ինչը կարծես անտեսված է. թերևս բացառություն են պոեմները, որոնք, սակայն, մնում են քնարականության սահմաններում, և պոեմի մյուս տեսակները դեռևս սպասում են նրա գրչին: Անձնական խոհերն ու հույզերը, որոնցով առեցնում է նրա պոեզիան, կարող է նաև իրենց տեղը գիշել արցախյան հարուստ պատումներին, որոնք գրական մշակման կարոտ են: Ամեն արցախյան մի անմեկնելի առասպել է, ուստի Լեռնիկ Հակոբյան բանաստեղծական առասպելը կհազարապատկվի, երբ բանաստեղծը հայացքը շրջի ներսից դուրս, սակայն չմոռանա դրսից ներս նայելու իր բանաստեղծական մշակույթը:

**Վանո ԵՂԱՋԱՐՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՊԵՏՏԱԿԱՏԱՐԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Մ Է 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Ի գիտություն միջնակարգ դպրոցի շրջանավարտների հայտնում ենք, որ «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության գծով թե ԱՌԿԱ, թե ՀԵՌԱ-ԿԱ կարգով սովորել ցանկացող

անձինք, անկախ տարիքից, կարող են իրենց դիմում-հայտը և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական տարածաշրջանային համալսարան, ուր և բուհի կողմից կազմակերպվում են նրանց ընդունելության բոլոր քննությունները:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանն է կազմակերպում նաև մյուս մասնագիտությունների գծով հեռակա կարգով սովորել ցանկացող դիմորդների ընդունելության քննությունները:

Ցանկացողները կարող են «Գրիգոր Նարեկացի» համալսարանում ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ստանալ հետևյալ մասնագիտությունների գծով (առկա և հեռակա).

- 1. Հայոց լեզու և գրականություն
2. Ռուսաց լեզու և գրականություն
3. Անգլերեն լեզու և գրականություն (առկա)
4. Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)
5. Պատմություն
6. Իրավագիտություն
7. Լրագրություն
8. Տնտեսագիտության տեսություն (ֆինանսներ, կառավարում, հաշվապահական հաշվառում)
9. Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն
10. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա:

Ուսման տևողությունը. առկա ուսուցմամբ՝ 4 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 5 տարի:

ՍԱԳԻՍՏՐՈՒԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (առկա և հեռակա ուսուցմամբ): «Գրիգոր Նարեկացի» համալսարանի, ինչպես նաև այլ բուհերի բակալոգի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և մագիստրոսի որակավորում ստանալու նպատակով կարող են իրենց կրթությունը շարունակել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մագիստրատուրայում:

կացի» համալսարանի մագիստրատուրայում:

Ուսման տևողությունը. առկա ուսուցմամբ՝ 2 տարի է, հեռակա ուսուցմամբ՝ 3 տարի:

Ուսուցումը կազմակերպում է հետևյալ մասնագիտությունների գծով.

- 1. Հայոց լեզու
2. Հայ գրականություն
3. Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)
4. Պատմություն
5. Իրավագիտություն
6. Լրագրություն
7. Տնտեսագիտության տեսություն (ֆինանսներ, կառավարում, հաշվապահական հաշվառում)
8. Ֆիզիկոլոգիա և սպորտ:

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ (առկա ուսուցմամբ): Քոլեջը կադրեր է պատրաստում հետևյալ մասնագիտությունների գծով.

- 1. Թարգմանություն և գործավարություն (հիմնական կրթությամբ՝ 4 տարի)
2. Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ՝ 4 տարի)
3. Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ՝ 4 տարի)
4. Ռուսական տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ՝ 4 տարի)
5. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ՝ 4 տարի)
6. Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ՝ 4 տարի)
7. Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ՝ 3 տարի 6 ամիս)
8. Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ՝ 3 տարի)
9. Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (հիմնական կրթությամբ՝ 3 տարի)
10. Մեքենայներ (հիմնական կրթությամբ՝ 3 տարի)
11. Ֆինանսներ (հիմնական կրթությամբ՝ 3 տարի)
12. Ատամնատեխնիկական գործ (հիմնական կրթությամբ՝ 3 տարի, միջնակարգ կրթությամբ՝ 2 տարի)
13. Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական կրթությամբ՝ 3 տարի 6 ամիս, միջնակարգ կրթությամբ՝ 2 տարի 6 ամիս)

Միջնակարգ և հիմնական դպրոցների շրջանավարտները նախընտրած մասնագիտության գծով քոլեջ են ընդունվում առանց ընդունելության քննությունների. նրանք, ովքեր ունեն միջնակարգ կրթություն, իրենց ուսումը շարունակում են երկրորդ կուրսից:

կում են երկրորդ կուրսից:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանին կից գործող քոլեջը գերազանց կամ հարվածային գնահատականներով ավարտողներն իրենց ուսումը համապատասխան մասնագիտությունների գծով կարող են առանց ընդունելության քննությունների շարունակել բարձրագույնի երկրորդ կամ երկրորդ կուրսերից՝ օգտվելով ուսման վճարի զգալի զեղչերից:

Համալսարանն ունի պետական կարգավիճակ. ուսանողներն ստանում են ՀՀ պետական դիպլոմ և, բնականաբար, օգտվում են պետության կողմից բուհերի համար նախատեսված բոլոր արտոնություններից: Պետությունը փոխհատուցում է ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաների, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, առանց ծնողական խնամքի մնացած և սոցիալապես անապահով երեխաների ուսման ծախսերը: Վարձավճարները մեզ մոտ առավել մատչելի են (35-40%-ով ցածր), քան մյուս բուհերում: Համալսարանի սովորողներն ըստ սոցիալական պայմանների, բացի պետական օժանդակությունից, օգտվում են նաև համալսարանի կողմից սահմանվող զգալի զեղչերից: Այս առումով հատուկ վերաբերմունք է դրսևորվում առանձնապես գերազանց սովորող ուսանողների նկատմամբ, ընդհուպ՝ մինչև անվճար ուսուցում:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի թե՛ առկա, թե՛ հեռակա բաժիններում սովորել ցանկացողները կարող են անհրաժեշտ փաստաթղթերը (դիմում, կրթության մասին փաստաթղթի բնագիր, 6 լուսանկար 3x4 չափսի, անձը հաստատող փաստաթուղթ) ներկայացնել «Գրիգոր Նարեկացի» համալսարան կամ իրենց ներկայացրած հայտերում առաջինը մշել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի անունը: Տասներկուերորդ դասարանում սովորողները, մինչև միջնակարգ կրթության մասին առեստատ ստանալը, համալսարան են ներկայացնում դրան փոխարինող համապատասխան տեղեկանք:

Բուհի դռները բաց են բոլոր նրանց առաջ, ովքեր անհրաժեշտ իմացություններ կդրսևորեն և կձգտեն ընտրած մասնագիտության գծով խորը գիտելիքներ ձեռք բերել:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք համալսարան (հասցե՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 44/46) կամ զանգահարեք 94-18-59, 94-14-29 հեռախոսահամարներով:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՐԱՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՆԱԽ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՇՐՋԱՆԱՎԱՐՏ» ՀԱՍՏԱՐՎԱԿԱՆ ԿԱԾՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԵՆՈՂ ԽՄԲԻ

Մենք՝ Արցախի պետական համալսարանի «Շրջանավարտ» հասարակական կազմակերպության նախաձեռնող խմբի անդամներս, հաշվի առնելով գիտության և բարձրագույն կրթության բնագավառի, միջազգային համալսարանական շարժման զարգացման միտումները, առաջնորդվելով համաշխարհային գիտակրթական գործընթացներին լիարժեք ինտեգրվելու գաղափարով, գնահատելով Արցախի պետական համալսարանի գրեթե կեսդարյա զգալի ներդրումը մեր երկրի գիտակրթական, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական համակարգի կայացման գործում, գիտակցելով Արցախի մայր բուհի հետագա զարգացման գործում նրա բազմաազդ շրջանավարտների մասնակցության, ինչպես նաև սովորող երիտասարդությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու անհրա-

ժեշտությունը՝ մայր բուհի և նրա շրջանավարտների միջև շարունակական կապն ապահովելու նպատակով հայտարարում ենք Արցախի պետական համալսարանի «Շրջանավարտ» հասարակական կազմակերպությունն ստեղծելու մտադրության մասին և կոչ ենք անում Արցախի մայր բուհի բոլոր տարիների շրջանավարտներին՝ անդամակցել կազմակերպությանը:

Տեղեկությունների համար կարող եք դիմել. ք. Ստեփանակերտ, Մխիթար Գոշի 5, ԱրՊՀ հանրային կապերի և լրատվության բաժին, էլ. հասցե. Iratu.asu@mail.ru, հեռախոսներ՝ (047) 94 91 48, (097) 25 06 35:

Խոսք հիշատակի ՄԵԿՆ ԷԼ ԳՆԱՑ

Հոգիս դարձյալ խռովվել է, տակնուկոս է եղել ողջ երկրում: Փորձում եմ խեղդել մերսս կուտակված փղձուկը, չի ստացվում: Ինչպե՞ս խեղդել, ախր որերորդ անգամն է մեր ուսուցչական կոլեկտիվում, որ այնպես համագիստ, անխռով հեռանում է երկրային կյանքից, դառնում հավերժի ճամփորդ ու ճախրում դեպի երկնային կյանք...

Բայց այս անգամ ուրիշ էր... Մարդը ողջ կյանքն ապրել է Արցախի աշխարհում, գործել հայրենի գյուղում, սակայն պիտի հանգրվանի օտար ափերում: Մի՞թե արդարացի է: Կյանքում նա երկի չէր էլ պատկերացրել, որ կարող էր հայտնվել մնան իրավիճակում: Օտարություն... Ախ, այս անխիղճ ու անարդարացի կյանքն ինչ անակնկալներ ասես չի մատուցում մեզ...

Ի՞նչ անել, երբ զավակները (երկու աղջիկը և մի սուսուկ տղան) հայտնվել են օտար ափերում՝ Կրասնոդարի երկրամասում: Չանսա՞ր նրանց կանչին, մեն ու մե՞նա՞կ ապրեր գյուղում, չտեսնե՞ր թոռներին ու ծոռներին, չուրախանա՞ր նրանց չարածճիություններով...

Նա՛ Ռիմա Գրիգորյանը, մեկն էր Աշանի միջնակարգ դպրոցի այն ուսուցիչներից, որ աշխատում էր անմնացորդ նվիրումով ու սիրով: Քիմիա էր դասավանդում: Նրա յուրաքանչյուր դաս մի ուրախություն էր: Ռեակցիաների բացատրությունը, յուրաքանչյուր մետաղի մեկնաբանում կամ որևէ բույսի խաչասերումն ու ծլարձակումը ներկայացնելն այնպիսի մեթոդներով էր կազմակերպում, որ նրա աշակերտների մոտ խոր նստվածք էր թողնում: Պատահական չէ, որ դպրոցն ավարտող աշակերտը կանգնում էր երկընտրանքի առաջ՝ քիմիա, թե՛ մեկ ուրիշ առարկա: Հիշում եմ, ինքս էլ նույն վիճակում էի: Սակայն մայրենիս ուսուցիչ՝ Լևոն Հարությունյանի ցանած հունդերն այնքան խորն էին, որ ինձ ձգեց մեր ուկեղենիկ մայրենին:

Սիրելի՛ ուսուցչուհի, ցավում եմ, որ հեռվից հեռու սզացիք քո մահը: Հավատում եմ, որ հոգիդ այստեղ է՝ Արցախում, և փորձում է միանալ մեր ուսուցչական կոլեկտիվի այն աստղաբույլին, որ կամա՞ց-կամա՞ց դարձել է քարեղեն արձան:

Թող օտար հողը թեթև լինի քեզ վրա...

Կիանա ԻՇԽԱՆՅԱՆ Աշանի միջև. դպրոցի և. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԼՈՒՍԱՐԱՐ ԻՄՔԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 20.04.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: